

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՍԿԻԶԲ ԱՌՆՈՂ ԱՆԿԱՆՈՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԵՐԵՎՈՒՅԹԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Բաժին 1. Միգրացիոն հոսքերի ընդհանուր նկարագիրը

1. Միգրացիոն իրավիճակ
2. Անկանոն միգրացիայի էությունը
3. Երևույթի դեմ պայքարի մեխանիզմները

Բաժին 2. Անկանոն միգրացիան ծնող պատճառներն ու հետևանքները

4. Հայաստանից ծնունդ առնող անկանոն միգրացիան
5. Անկանոն միգրացիայի պատճառներն ու հետևանքները

Բաժին 3. Առաջարկություններ և միջոցառումների ծրագիր

Ներածություն

Սույն հայեցակարգի համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 2011 թ. գերակա խնդիրների ցանկում ընդգրկված «Հայաստանի Հանրապետությունից սկիզբ առնող անկանոն միգրացիայի երևույթի ուսումնասիրություն և դրա կանխարգելման նպատակով առաջարկությունների ներկայացում» հարցի իրականացման պահանջը:

Անկանոն միգրացիայի հետ կապված հարցերի ներառումը գերակա խնդիրների շարքում ինքնին վկայում է այս երևույթի դեմ պայքարի կարևորությունը մեր պետության և հասարակության համար: Եվ հարցի այսպիսի արժևորումը նորություն չէ. 2011թ հունվարի 13-ին ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած **Միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության** նոր հայեցակարգում առանձնացված 14 գերակա ուղղությունների թվում նշված է նաև այս հիմնախնդիրը՝ իր լուծման հիմնորոշ ուղղություններով:

Մյուս կողմից՝ ՀՀ կառավարության 2009թ. դեկտեմբերի 17-ի «ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության աշխատակազմ՝ պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության կանոն-

նադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 1515-Ն որոշմամբ Ծառայության նպատակներից և խնդիրներից է՝

անկանոն միգրացիայի կանխարգելման նպատակով ՀՀ համապատասխան նախարարությունների, դիվանագիտական ներկայացուցչությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ համապատասխան ծրագրերի մշակումն ու իրականացումը:

Երևոյթի ուսումնասիրության ընթացքում օգտագործվել է երկրորդային վերլուծության մեթոդը: Այն հիմնված է այլ կազմակերպությունների և անձանց կողմից մինչ այժմ կատարված տարբեր հետազոտությունների, մասնագիտական գրականության վերլուծության, ինչպես նաև բնագավառը կարգավորող բազմակողմ և տարածաշրջանային նորմատիվ իրավական ակտերի ուսումնասիրությունների վրա:

Անկանոն միգրացիայի երևոյթի վերաբերյալ մասնագիտական գրականությունը անդրադառնում է զուտ ընդունող երկրի տեսանկյունից՝ մասնավորապես շեշտը դնելով սահմանային հսկողության ուժեղացման, աշխատանքի, բնակության թույլտվության և ապաստանի համակարգերի արդյունավետության բարձրացման վրա: Այսինքն՝ այն ընկալվում է որպես մարտահրավեր առաջին հերթին նպատակակալ երկրների համար:

Քանի որ Հայաստանը հանդիսանում է ծագման երկիր և դեպի Հայաստան իմիգրացիոն հոսքերն աննշան են, սույն աշխատանքում անկանոն միգրացիայի գնահատումն ու առաջարկությունների ներկայացումն իրականացվել է ոչ թե այլ երկրներից Հայաստան մտնող անկանոն իմիգրացիոն հոսքերի դեմ պայքարի տեսանկյունից, այլ ՀՀ-ից դեպի այլ երկրներ ուղղվող անկանոն էմիգրացիոն հոսքերի, մասնավորապես այլ երկրներ անօրինական ճանապարհով մուտք գործած կամ այնտեղ առանց իրավական հիմքերի գտնվող միգրանտներին վերաբերող հիմնախնդիրների լուծման տեսանկյունից:

Փաստաթուղթն առանձնակի ուշադրություն է դարձրել ոչ միայն մեկնողներին, այլև վերադարձած անձանց, որոնց շրջանում նկատվում է կրկնվող միգրացիա՝ ռեցիկլացիա:

Աշխատանքն ունի հետևյալ **կառուցվածքը**. այն կազմված է ներածությունից և 3 բաժիններից:

Առաջին բաժինը բաղկացած է 3 գլուխներից: Առաջին գլուխն արծարծում է միգրացիայի հետ կապված ընդհանուր հարցեր, նկարագրվում են ՀՀ-ից միգրացիոն հոսքերի ծավալներն ու ուղղությունները և անկանոն միգրացիայի դրսևորումները: Երկրորդ գլխում ներկայացվում է անկանոն միգրացիայի սահմանումը, դրա դրսևորման առանձնահատկությունները և տարբեր երկրների որդեգրած մոտեցումները՝ երևոյթի դեմ պայքարի նպատակով: Երրորդ գլխում տրվում է երևոյթի դեմ պայքարի նպատակով բազմակողմ և երկկողմ մակարդակներում կյանքի կոչված միջազգային իրավական ակտերի վերլուծությունը:

Երկրորդ բաժինը բաղկացած է 2 գլուխներից: Առաջին գլուխը բացահայտում է անկանոն միգրացիայի երևոյթի առանձնահատկությունները՝ հիմնվելով բնագավառում կատարված հետազոտությունների վրա, իսկ երկրորդ գլխում վեր են հանվում անկանոն միգրացիա երևոյթի հիմնորոշ խնդիրները:

Երրորդ բաժնում տրված են ՀՀ-ից ծնունդ առնող անկանոն միգրացիայի դեմ պայքարին ուղղված առաջարկություններն ու միջոցառումների ծրագիրը:

Բաժին 1. Միգրացիոն հոսքերի ընդհանուր նկարագիրը

1. Միգրացիոն իրավիճակ

Վերջին քսան տարիներին էականորեն փոխվել են ինչպես Հայաստանի Հանրապետությանն առնչվող միգրացիոն գործընթացները, դրանք ծնող պատճառներն ու հետևանքները, միգրացիոն գործընթացների մեջ ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներգրավված խմբերն ու նրանց խնդիրները, այնպես էլ պետական կարգավորման միջոցով հիմնախնդրի լուծման մասին պատկերացումները:

Միգրացիոն գործընթացներին առնչվող առաջին աղբյուրը ՀՀ ոստիկանության անձնագրային համակարգի ստորաբաժանումներում հաշվառման կանգնող և հաշվառումից դուրս եկած անձանց վերաբերյալ տվյալներն են: Այս ցուցիչը խորհրդային տարիներին ճշգրիտ պատկերացում էր տալիս, քանի որ 3 ամսից ավելի բացակայողները և նույն ժամկետում նոր բնակավայրում բնակվողները պարտավոր էին հաշվառումից դուրս գալ և ժամանակավոր հաշվառման կանգնել նոր բնակավայրում: Ներկայումս այդ ցուցիչը ամբողջական պատկերացում չի տալիս, քանի որ հետազոտությունների համաձայն Հայաստանից մեկնողների միայն փոքր մասն է դուրս գալիս հաշվառումից:

Միգրացիոն իրավիճակի գնահատման մյուս աղբյուրը միգրացիոն գործընթացների վերաբերյալ անցկացված հետազոտություններն ու ուսումնասիրություններն են, որոնք, որպես կանոն, իրականացվել են միջազգային կազմակերպությունների պատվերով /ԵԱՀԿ, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, ՄԱԿ-ի զարգացման ծարգիր, Աշխատանքի միջազգային կազմակերպություն/ մասնագիտացված, անկախ կազմակերպությունների կողմից՝ հիմնականում սոցիոլոգիական հարցումների ճանապարհով: Ըստ նշված հետազոտությունների՝ **1988-2001թթ. հանրապետությունից արտագաղթել է մինչև 1,0-1,1 մլն մարդ** /տես ՄԱԿ ԶԾ 2009թ. Հայաստանի Մարդկային զարգացման ազգային զեկույցը, էջ 51/:

2002-2007թթ. արտաքին միգրացիոն տեղաշարժերի ծավալները կազմել են. արտահոսք՝ մոտ 750 հազար մարդ, ներհոսք՝ գրեթե 600 հազար մարդ, բացասական մնացորդ՝ շուրջ 150 հազար մարդ /նույն տեղը. էջ 46/:

Այս շրջանում տարեկան միջին հաշվով արտաքին միգրացիոն բացասական մնացորդը կազմել է գրեթե 25 հազար, որոնցից շուրջ 9000-ը էմիգրացվել է մշտապես /դուրս են եկել մշտական հաշվառումից/, իսկ 15000-20000-ը աշխատանքային միգրանտներն են, որոնք չեն վերադարձել և շարունակում են մնալ ընդունող երկրներում: Այսինքն՝ նշված ժամանակաշրջանի ընթացքում առաջացել է այդպիսի անձանց շուրջ 110 000-ի հասնող «կուտակումներ», սակայն չի կարելի բացառել հետագայում նրանց վերադարձը հայրենիք (նույն տեղը, էջ 47):

2008թ. սկսած էմիգրացիայի ծավալների գնահատման նպատակով հատուկ թիրախավորված հետազոտություն չի անցկացվել. իրականացվել են միայն միգրացիոն բնույթի այլ հետազոտություններ /թրաֆիքինգ, միգրանտների դրամական փոխանցումներ և այլն/:

Ուղևորահոսքերի ծավալների վերաբերյալ տվյալները չեն փաստում, որ վերջին 1-1,5 տարիների ընթացքում, երբ սկսվեց այս հարցի շուրջ հանրային թեժ քննարկումները, էմիգրացիայի ծավալներում կտրուկ փոփոխություններ են գրանցվել: Եթե իրոք 2009թ. հետո այն ահագնացող չափերի հասներ, ապա դա պետք է իր արտացոլումը գտներ նաև ուղևորահոսքերի մեջ: Վերլուծությունները ցույց են տալիս, որ 2008 թ. ուղևորահոսքերի տարեկան բացասական մնացորդը կազմել է 23059, 2009թ.՝ 24978, իսկ 2010թ.՝ 29860 մարդ: Այսինքն՝ բացասական հաշվեկշիռն համապատասխանաբար ավելացել է ընդամենը 2 և 4,8 հազարով: Ոչ վաղ անցյալի մեր պատմությունից մենք ունեցել ենք տարիներ՝ 1992-1994թթ.-ին, երբ բացասական մնացորդը 1991թ. նկատմամբ աճել է 100000 և ավելի մարդով և իրոք այդ տարիներին տեղի ունեցած բնակչության զանգվածային արտահոսք Հայաստանից:

Ինչպես ցույց են տալիս միգրացիոն հոսքերի վերաբերյալ անցկացված գրեթե բոլոր հետազոտությունները, արտագաղթի հիմնական պատճառները սոցիալ-տնտեսական են: Այդ մասին է թերևս վկայում նաև ամենաթարմ հետազոտական աշխատանքից՝ «ՀՀ աշխատանքի շուկայի վերլուծություն»-ից (Երևան, 2010թ.) վերցված տվյալները, ըստ որի վերջին տարիներին Հայաստանից մեկնելու հիմնական պատճառներն են.

- ՀՀ-ում աշխատատեղերի բացակայությունը -22.6%
- բարձր վարձատրվող աշխատանքի բացակայությունը -24.1%
- այլ պետությունում գտնվող ընտանիքի անդամին միանալը -20.5%
- մասնագիտական աշխատանքի բացակայությունը -2.3%:

ԵԱՀԿ պատվերով «Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ» ՀԿ-ի կողմից ՀՀ-ում իրականացված սոցիոլոգիական հետազոտության արդյունքում ստացված տվյալների համաձայն հարցվածների 93.5%-ի կողմից որպես մեկնելու դրդապատճառ նշվել են Հայաստանում զբաղվածության հետ կապված խնդիրները, որոնցից.

- 46.5%-ը նշել են, որ Հայաստանում աշխատանք չկա
- 43.0% -ը հիշատակել են ցածր աշխատավարձը:

Աշխատանքային միգրանտ է ՀՀ տնտեսապես ակտիվ տղամարդկանց 13.1%-ը, իսկ կանանց՝ 1.7%-ը: Աշխատանքային միգրանտների մոտ կեսը պատկանում է 21-40 տարիքային խմբին, իսկ մյուս կեսն էլ՝ 41-60 տարիքային խմբին:

Միգրանտների 75%-ից ավելին ունեն միջնակարգ կամ միջին մասնագիտական կրթություն, իսկ մոտ 20%-ը ունեն բարձրագույն կրթություն:

Աշխատանքային միգրանտների 93 %-ը մեկնել են Ռուսաստանի Դաշնություն: Մինչդեռ աշխատանքի նպատակով այլ երկրներ մեկնելու դեպքերը խիստ աննշան են.

- 1.8%-ը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ
- 1.6%-ը՝ Ուկրաինա
- 1.1%-ը՝ Իսպանիա:

Միգրացիայի մասին տեղեկությունների պակասով, ընդունող երկրներում օրինական ընթացակարգերի բարդությամբ, ինչպես նաև նախկինում ունեցած կապերի արդյունքում պատմականորեն ձևավորված ավանդությամբ և այլ հանգամանքներով պայմանավորված ՀՀ քաղաքացիների մի զգալի հատված ընդունող երկրներում հայտնվում է անկանոն միգրանտի կարգավիճակում խնդիրներ ստեղծելով ինչպես իրենց, այնպես էլ ընդունող և ծագման երկրների համար:

2. Անկանոն միգրացիայի էությունը

Միգրացիայի խնդրով զբաղվող մասնագետների և կազմակերպությունների կողմից երկուսի վերաբերյալ օգտագործվում են կանոնավոր/օրինական միգրացիա և անկանոն/անօրինական միգրացիա կամ էլ լատիներեն լեզվա-անլեզվալ արտահայտությունները:

Կանոնավոր-անկանոն միգրացիա առավելապես օգտավորվում է քաղաքացիական ծառայության ներկայացուցիչների կողմից, ովքեր ընդգծում են ընդունված կանոնների պահպանման կամ խախտման հանգամանքը: Օրինական-անօրինական միգրացիա մասնավորապես կիրառվում է իրավապահ մարմինների ներկայացուցիչների կողմից, ովքեր ընդգծում են երկուսի իրավաչափության կողմը:

Այսպիսով բացասական ընկալումն առկա է, երբ կիրառվում են «անլեզվալ» միգրացիա և «անլեզվալ» միգրանտ եզրույթները: «Անլեզվալություն» հասկացությունը «քրեականության» կնիք է կրում, և անօրինական շատ միգրանտներ, եթե անգամ խախտել են երկիր մուտք գործելու և գտնվելու ոլորտի իմիգրացիոն օրենքները, չեն կարող համարվել հանցագործներ այդ բառի սովորական ըմբռնմամբ:

Աշխատանքի միջազգային կազմակերպության տեսանկյունից անընդունելի է «անօրինական միգրանտ» բառակապակցությունը, քանի որ միգրանտը նախ և առաջ մարդ է, իսկ մարդը չի կարող լինել անօրինական:

Այնուհանդերձ, ԱՊՀ երկրների շրջանակներում բացառապես կիրառելի են օրինական կամ անօրինական միգրացիա եզրերը:

Իսկ ի՞նչ է կանոնավոր կամ օրինական միգրացիան: Օրինական միգրացիան (կանոնավոր միգրացիա) օտարերկրացու մուտքն է ընդունող պետություն, այնտեղ բնակությունը, աշխատանքային գործունեությունը օտարերկրացիների մասին տվյալ պետության սահմանած կարգերին ու պայմաններին համապատասխան:

Փաստորեն, անօրինական միգրանտի կարգավիճակում կարող են հայտնվել այն օտարերկրացիները, ովքեր.

- տվյալ երկիր են մուտք գործել առանց թույլատվության
- տվյալ երկիր են մուտք գործել օրինական հիմունքներով, սակայն
 - աշխատանքային միգրանտը չի երկարացրել իր աշխատանքի թույլտվությունը
 - ապաստանի հայցի մերժում ստացած անձը շարունակում է մնալ այդ երկրում
 - երկրում գտնվելը չի համապատասխանում մուտքի արտոնագրում նշված նպատակին (օրինակ՝ տուրիստական վիզայով երկիր ժամանած անձը տեղավորվել է աշխատանքի)
 - մուտքի արտոնագրում հայտարարված ժամկետից կամ օրենքով սահմանված ժամկետից ավելի երկար ժամանակով են գտնվում տվյալ երկրում:

Անօրինական միգրացիան ըստ էության միգրացիոն երկուսի հակառակ „երեսն“ է: Գոյություն չունի անկանոն միգրացիա հասկացության հստակ կամ համընդհանուր ճանաչված սահմանում: Ըստ Միգրացիայի միջազգային կազմակերպության՝ դա ելքի, տարանցիկ և մուտքի երկրների հսկողությունից դուրս տեղի ունեցող տեղաշարժն է: *Նպատակակետ երկրների տեսանկյունից* անկանոն միգրացիան երկիր անօրինական մուտք գործելը, մնալը կամ աշխատելն է, որը նշանակում է, որ միգրանտը չունի իմիգրացիայի մասին կանոնակարգերով սահմանված տվյալ երկիր մուտքի, կացության կամ աշխատելու իրավունք կամ համապատասխան փաստաթուղթ: **Ելքի երկրի տեսանկյունից՝ անօրինական են համարվում, օրինակ, այն դեպքերը, երբ անձը հատում է միջազգայնորեն ճանաչված սահմանը առանց վավերական անձնագիր**

կամ ճամփորդական փաստաթուղթ ունենալու կամ չի բավարարում երկրից մեկնման համար անհրաժեշտ վարչական պահանջներին: Այդ առումով հարկ է նշել, որ Հայաստանը մինչև այժմ չունի ՀՀ-ից քաղաքացիների ելքի և ՀՀ մուտքի մասին օրենք, և դա կարող է լրջագույն բաց համարվել:

Անօրինական միգրացիան երբեմն եվրոպական փորձագետների կողմից օգտագործվում է նաև «ստվերային միգրացիա» «լատենտային միգրացիա», իսկ անօրինական միգրանտները՝ «փաստաթուղթ չունեցող միգրանտներ» անվանումներով:

Անկանոն աշխատանքային միգրացիա համարվում է օտարերկրացու աշխատանքի տեղավորումն առանց աշխատանքի թույլտվության և աշխատանքային պայմանագրի:

Անկանոն միգրացիայի մասին խոսելիս հնարավոր չէ շրջանցել «Անօրինական սահմանահատումներ» (Smuggling) և «Մարդկանց առևտուր» (Trafficking) հասկացությունները:

«Անօրինական սահմանահատումները, ուղղակի կամ անուղղակի ձևով, ֆինանսական կամ այլ նյութական շահ ստանալու նպատակով այլ անձի անօրինական մուտքը այդ անձի քաղաքացիության կամ մշտական բնակության վայր չհանդիսացող երկիր կազմակերպելն է» (ՄԱԿ-ի 2000թ. «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» Պալերմոյի կոնվենցիային կից «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին» թիվ 2 կամընտիր արձանագրության 3-րդ հոդվածի «ա» ենթակետ): Անօրինական սահմանահատումները, ի տարբերություն մարդկանց առևտրին, չի պահանջում շահագործում, հարկադրանք կամ մարդու իրավունքների խախտում:

Մարդկանց թրաֆիքինգը սահմանվում է հետևյալ կերպ. «Շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը՝ ուժի գործադրմամբ կամ դրա սպառնալիքով կամ հարկադրանքի այլ ձևերով, առևանգմամբ, խարդախությամբ, խաբեությամբ, խոցելի վիճակի հետ կապված գերակա դիրքի չարաշահմամբ, կամ մեկ այլ անձի նկատմամբ հսկողություն իրականացնող անձի համաձայնությունը ստանալու նպատակով վճարումներ կամ օգուտներ տալու կամ ստանալու միջոցով» (ՄԱԿ-ի 2000թ. «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» Պալերմոյի կոնվենցիային կից «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին» թիվ 2 կամընտիր արձանագրության 3-րդ հոդվածի «ա» ենթակետ):

Շահագործումը ներառում է առնվազն հետևյալը. այլ անձանց պոռնկության կամ սեռական այլ շահագործումը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը հավասարազոր վիճակի հասցնելը կամ կախյալ վիճակի մեջ դնելու կամ մարդու օրգանները վերցնելը: Նախատեսվող շահագործման համար մարդկանց թրաֆիքինգից տուժած անձի համաձայնությունը որևէ նշանակություն չունի, եթե կիրառվել են (վերոհիշյալ) միջոցները:

Անօրինական միգրանտների վերաբերյալ հավաստի տվյալները գլոբալ իմաստով բացակայում են: Ըստ երկրների առկա են հետևյալ գնահատականները.

- ԱՄՆ՝ 11-12 մլն
- Ռուսաստանի Դաշնություն՝ 5-15 մլն
- Ճապոնիա՝ ավելի քան 200 հազ.
- Ավստրալիա՝ 60 հազ.-ից ավելի

Անկանոն միգրացիայի դեմ պայքարի ռազմավարությունները մշակելիս ընդունող երկրները հիմնականում կիրառում են զսպող միջոցառումներ, ինչպիսիք են՝

- սահմանային հսկողության համակարգի ուժեղացում
- իմիգրացիոն օրենսդրության և պրակտիկայի խստացում, այդ թվում՝ վարչական վտարում և արտաքսում:

Վարչական վտարումը երկրի տարածքից օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հարկադրական և վերահսկողական տեղափոխումն է կամ վերահսկվող ինքնակամ մեկնումը: Այն համարվում է վարչական պատժամիջոց և կայացվում է համապատասխան իրավասություն ունեցող մարմինների և դատական իշխանությունների կողմից, երկիր մուտք գործելու ժամանակ վարչական իրավախախտում կատարելու դեպքում՝ համապատասխան սահմանապահ մարմինների պաշտոնատար անձանց կողմից:

Արտաքսման ենթակա է օրենքով սահմանված ժամկետում մուտքի երկրի տարածքից չմեկնած օտարերկրյա քաղաքացին: Օտարերկրյա քաղաքացու վտարման մասին որոշում կայացնելու համար հիմք կարող են հանդիսանալ բնակվելու կամ գտնվելու ժամկետի կրճատումը, կամ էլ ժամանակավոր բնակության թույլտվության կամ կացության կարգավիճակի անվավեր համարելը, երկրում գտնվելու անցանկալիության մասին որոշման ընդունումը, ապաստանի հայցի մերժումը կամ փախստականի կարգավիճակից զրկելու հանգամանքը: Նշված դեպքերում մուտքի երկրի օրենքով սահմանվում են ժամկետներ, որոնց ընթացքում օտարերկրացին պարտավոր է լքել երկիրը:

Վարչական կամ արտաքսման ճանապարհով երկրից հեռացման դեպքում անկանոն միգրանտների տվյալ երկիր կրկին այցելելու իրավունքը, որպես կանոն, ժամանակավորապես սահմանափակվում է: Օրինակ՝ օտարերկրյա քաղաքացու մուտքը Ռուսաստանի Դաշնություն չի թույլատրվում ՌԴ-ից վարչական վտարման կամ արտաքսման մասին որոշման կատարման օրվանից սկսած 5 տարվա ընթացքում:

- *Ռեադմիսիան (երկրում առանց իրավական հիմքերի բնակվող օտարերկրացիների՝ ելքի երկիր հեղձնդունմանն ուղղված միջոցառումներ):*

Ռեադմիսիոն պայմանագրերի միջոցով փորձ է արվում անկանոն միգրացիայի խնդիրը լուծել միջպետական մակարդակով՝ ելքի և մուտքի երկրների համագործակցությամբ:

Ռեադմիսիոն համաձայնագրերով կարգավորվում են Կողմերի տարածքում առանց թույլտվության ապրող անձանց հետընդունման կազմակերպման հարցերը:

Համաձայնագրով սահմանվում են Կողմերի քաղաքացիների, երրորդ երկրների քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց հետընդունման կարգն ու պայմանները, նրանց ինքնությունն ու քաղաքացիությունը ապացուցող փաստաթղթերի ցանկը, ռեադմիսիայի մասին հայցերի ուղարկման և քննարկման ժամկետները, անձանց փոխանցման և ընդունման ժամկետները, տարանցումը, ռեադմիսիայի կամ տարանցման մասին հայցի բովանդակությունը, անձնական տվյալների պաշտպանությունը, Կողմերի լիազոր մարմինները և այլն:

Ռեադմիսիոն համաձայնագրի կնքումը նախադրյալ է միգրացիայի հարցերով ավելի ընդլայնված համագործակցության հաստատման համար (ռեինտեգրացիոն աջակցություն, վիզաների դյուրացում): Հայաստանն ակտիվորեն ներգրավված է այս գործընթացի մեջ:

Խնդրի կարգավորման հետ կապված որոշ ընդունող երկրներ երբեմն կիրառում են՝

- *համաներումների անցկացում*

90-ական թվականներին անցկացվել է առնվազն 21 նման ծրագիր, որի արդյունքում ավելի քան 2.7 մլն միգրանտների հաջողվել է կարգավորել իրենց կարգավիճակը: 2000թ.-ից սկսած իրականացվել է նման ևս 14 ծրագիր, որոնցում ընդգրկվել է 2.6 մլն մարդ:

Համաներման ենթարկվելու համար միգրանտները պետք է բավարարեն որոշակի պայմանների՝ ունենան աշխատանք, բնակարան և ապրուստի միջոցներ:

Սովորաբար համաներման արդյունքում միգրանտները ստանում են աշխատանքի և բնակության ժամանակավոր թույլտվության՝ հետագայում այն երկարացնելու հնարավորությամբ:

Համաներման՝ որպես մոտեցման առնչությամբ Եվրամիության տարբեր երկրներ ունեն տարբեր մոտեցումներ և միշտ չէ, որ բոլորի կողմից այն միանշանակ է ընդունվում: Մասնավորապես մտահոգիչ է այն հանգամանքը, որ անօրինական միգրանտները, ստանալով օրինական կարգավիճակ, հնարավորություն են ստանում ոչ միայն համաներում հայտարարած երկրում ազատ տեղաշարժվել, այլ նաև ԵՄ մյուս երկրներով, ինչը առանձին երկրների համար կարող է անցանկալի լինել: Բացի այդ, անկանոն միգրանտները կշարունակեն մնալ երկրում հույսեր փայփայելով, որ մի օր իրենց նկատմամբ նույնպես կկիրառվի այդ մոտեցումը:

Հայաստանից մեկնող անկանոն միգրանտներին պայմանականորեն կարելի է բաժանել երեք կատեգորիաների՝

- *մերժում սպացած ապաստան հայցողներ*, որոնց հոսքը հիմնականում ուղղված է արևմատավրոպական երկրներ:

- **օտարերկրացիների աշխատանքի ընդունման կանոնները խախտած միգրանտներ**, որոնք հոսքը հիմնականում ուղղված է ԱՊՀ երկրներ, մասնավորապես ՌԴ:
- **ընդհանուր միգրացիոն օրենսդրությունը խախտած միգրանտներ**, որոնք մուտքի արտոնագրում հայտարարված ժամկետից կամ օրենքով սահմանված ժամկետից ավելի երկար ժամանակով են ապրում ընդունող երկրում:

«Քաղաքացի ապաստան հայցողների թիվը տարեկան տատանվում է 6000 մարդու սահմաններում: Որպես կանոն, «Քաղաքացիների մի մասը ընտրում են այդ ճանապարհը, որովհետև շատերի համար արևմտաեվրոպական երկրներում օրինականորեն հաստատվելու միակ հնարավոր, իրատեսական եղանակն է, իսկ ուսման, աշխատանքի կամ ընտանիքի վերամիավորման հիմքով երկրում մնալու համար կարող է հաջողվել բացառիկ դեպքերում:

«Այաստանից օտարերկրյա պետություններում ապաստանի հացերի ներկայացման օրինաչափություն է նկատվում: Եթե 1990-ական թվականներին ապաստան հայցողների գերակշիռ մասը բաժին էր ընկնում Գերմանիային, ապա Բենիլյուքսի երկրներին, 2000թ.-ից գերակայող էր Ավստրիան և Չեխիան: 2003թ այս առումով առաջատար է Ֆրանսիան: Այսպես, օրինակ՝ 2009թ. 44 ավանդաբար ապաստան տրամադրող երկրներում միասին ապաստանի հայց ներկայացրած 6226 «Քաղաքացիներից 3114-ը բաժին է ընկել Ֆրանսիային:

Եվրոպական երկրներում ապաստանի հայցի ներկայացումը Հայաստանի բնակչության շրջանում լայնորեն տարածված է «հանձնվել» անվան տակ: «Քաղաքացիների դեպքում քաղաքական կամ այլ պատճառներով պայմանավորված հետապնդումների լեգենդը արևմուտքում լուրջ չի ընդունվում: Ինչ վերաբերում է ծանր սոցիալ-տնտեսական պայմաններին, ապա պետք է հիշել՝ ապաստանի տրամադրման հարցում ոչ մի երկրում ծանր սոցիալ-տնտեսական պատճառների փաստարկը հիմք չի ընդունվում: Եթե նույնիսկ ՀՀ-ից մեկնած որևէ անձ այդ երկրներում ստանում է փախստականի կարգավիճակ, ապա դա խիստ եզակի բացառություն է և ավելի շուտ հետևանք է ոչ թե իրական հանգամանքների, այլ ընդամենը լավ հորինված լեգենդի:

Ապաստանի հայցերի մերժմանը կամ միգրացիայի նոր անհաջող փորձերին հետևում է հարկադիր կամ կամավոր վերադարձը:

Ինչպես նշվեց, անկանոն միգրանտների մի ստվար բանակ են կազմում աշխատանքային միգրանտները: Իրականում աշխատանքային միգրանտներից և օտարերկրյա գործատուներից յուրաքանչյուրը օրինական գործընթացներից խուսափելու իր պատճառն ու շարժառիթն ունի: Սովորաբար միգրանտները խուսափում են միգրացիոն հաշվառման և աշխատանքի թույլտվության՝ այդքան բարդ համակարգից, ինչպես նաև բյուրոկրատական քաշքշուկից: Գործատուները իրենց հերթին շահագրգռված են օտարերկրյա աշխատուժի ոչ ֆորմալ ներգրավմամբ, որպեսզի էժան վարձատրեն աշխատողներին, ինչպես նաև շահագործեն նրանց աշխատանքը և իրենց վրա չվերցնեն իրավական ոչ մի պարտավորություն: Մյուս կողմից, երկու կողմերն էլ միմյանց կապված չեն. թե գործատուն ցանկացած պահից կարող է ազատվել աշխատողից, թե աշխատողը հեշտությամբ կարող է փոխել գործատուին: Օրենքից դուրս վիճակը երկուստեք «շահեկան» է դառնում: Անկանոն միգրանտների թվի աճին էապես ազդում է նաև աշխատանքի թույլտվությունների քվոտաների՝ մինչև տարվա վերջ սպառման հանգամանքը:

3. Երևույթի դեմ պայքարի մեխանիզմները

Քանի որ անկանոն միգրացիան առնչվում է թե ընդունող, թե ծագման երկրներին և թե ուղղակիորեն միգրանտներին, խնդրի կարգավորման արդյունավետությունը ենթադրում է մուտքի և ելքի երկրների ջանքերի համատեղում: Ահա թե ինչու երևույթի դեմ պայքարի մեխանիզմներից է համարվում միջազգային իրավական ակտերի ընդունումը, որոնք կյանքի են կոչվում բազմակողմ և երկկողմ մակարդակով: Ի լրումն այդ մեխանիզմների, պետությունները կիրառում են նաև իրենց քաղաքականությունը ազգային մակարդակով:

3.1 Բազմակողմ մակարդակում

Բնագավառը բազմակողմ մակարդակում կուռ մշակված է: Ստորև բերվում է միջազգային իրավական ակտերի վերլուծությունը.

3.1.1 ՄԱԿ-ի կողմից ընդունված կոնվենցիաներ՝

- **«Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ»** Պալերմոյի կոնվենցիա և դրան կից՝ **«Ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական փոխադրումների դեմ»** թիվ 1 ու **«Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին»** թիվ 2 կամընտիր արձանագրությունները.

Կոնվենցիան ընդունվել է 2000 թ., անդամակցում է 148 պետություն: ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 2003թ.-ի ապրիլի 19-ից: Հիշատակված միջազգային պայմանագրերով սահմանվում է, որ թրաֆիքինգը հանցագործություն է ընդդեմ մարդկության, որին բնորոշ է խաբելու և շահագործելու մտադրությունը: Առանձնացվում է այն գործողությունների շարքը, որոնք համարվում են թրաֆիքինգի գործընթացի բաղադրիչներ: Նախատեսում է իրավունքների վրա հիմնված, ինչպես նաև պաշտպանության սոցիալական, տնտեսական, քաղաքական և իրավական միջոցներ, որոնց նպատակն է կանխել թրաֆիքինգը, պաշտպանել, աջակցել, վերադարձնել և վերահստահել թրաֆիքինգի ենթարկված անձանց, ինչպես նաև քրեական օրենքով պատժելի դարձնել թրաֆիքինգը և հարակից գործողությունները: Կոչ է անում թրաֆիքինգի կանխարգելման և պայքարի ոլորտում ծավալել միջազգային համագործակցություն:

Ի տարբերություն բազմաթիվ միջազգային բազմակողմ պայմանագրերի՝ երկրների կողմից թրաֆիքինգի վիճակի վերաբերյալ հաշվետվության մեխանիզմը բացակայում է, սակայն դրան փոխարինում է ԱՄՆ պետքարտուղարության կողմից Կոնգրեսին ներկայացվող ամենամյա զեկույցը, որտեղ երկրները բաժանվում են 3 խմբի: Հայաստանը, առաջին անգամ ընդգրկվելով այդ ցուցակում, դասվել էր երրորդ խմբի երկրների շարքում: Այնուհետև վերադասակարգվել էր 2-րդ խումբ, հետո՝ հայտնվել 2-րդ խմբի վերահսկման ցուցակում, իսկ 2010թ.-ի տարեկան զեկույցում Հայաստանը կրկին դասվել է 2-րդ խմբի երկրների շարքում:

- **«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիային կից արձանագրությունը «Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին».**

Արձանագրությունն ընդունվել է 2000 թ., անդամակցում է 141 պետություն: ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 2005թ.-ի հուլիսի 30-ից: Արձանագրությամբ «Երեխաների առևտուր» նշանակում է երեխայի առաջարկը, փոխանցումը կամ ստանալը ցանկացած միջոցներով նպատակ ունենալով՝ երեխայի սեռական շահագործումը, վճարման դիմաց երեխայի մարմնի անդամների փոխանցումը, երեխայի օգտագործումը հարկադիր աշխատանքներում, ինչպես նաև որպես միջնորդ երեխայի ոչ իրավաչափ որդեգրման մտադրությունների դրսևորումը, ինչը հակասում է որդեգրման վերաբերվող միջազգային իրավական ակտերին:

Կոնվենցիային մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է վերոհիշյալ գործողությունները իր քրեական իրավունքում դիտել որպես հանցատեսակներ և դրանց համար սահմանել պատիժներ՝ ելնելով դրանց ծանրության աստիճանից, անկախ նրանից, թե այդ հանցագործությունները կատարվել են ազգային կամ անդրազգային մակարդակում կամ ահատական կամ կազմակերպված կարգով:

- **«Բոլոր աշխատող միգրանտների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության մասին» կոնվենցիա (ՀՀ-ն դեռևս չի անդամակցում).**

Թերևս անկանոն միգրացիայի խնդրի կարգավորման տեսանկյունից կարևոր բաց կարել է համարել Հայաստանի կողմից ՄԱԿ-ի վերոհիշյալ կոնվենցիային չանդամակցելու հանգամանքը: Կոնվենցիան ընդունվել է 1990թ.: Մինչ այժմ փաստաթուղթը վավերացրել է 44 պետություն: Ժամանակի առումով կոնվենցիայի գործողությունը ընդգրկում է միգրացիայի ամբողջ ընթացքը՝ միգրացիայի նախապատրաստումը, ելքը, տարանցիկ անցումը, վճարովի գործունեության ամբողջ ընթացքը և վերադարձը ելքի երկիր:

Կոնվենցիան միաժամանակ անդրադառնում է անօրինական կարգավիճակում հայտնված միգրանտների իրավունքներին մարդու համընդհանուր ճանաչում գտած իրավունքների տեսանկյունից: Կտրուկ դատապարտվում է ցանկացած գործողություն, որն ուղղված է աշխատանքային միգրանտին խոշտանգումների, դաժան անմարդկային վերաբերմունքի ենթարկելուն, ստրկության մեջ պահելուն,

հարկադիր կամ պարտադիր աշխատանքի ենթարկելուն, կոլեկտիվ արտաքսման ենթարկելուն, անձնական և ընտանեկան կյանքին անօրինական միջամտություն ցուցաբերելուն, սեփականության իրավունքից զրկելուն և այլն:

Կոնվենցիայով *կարգավիճակ ունեցող* միգրանտների համար սահմանվում են այնպիսի լրացուցիչ իրավունքներ և արտոնություններ, որոնցով նրանք շատ են մոտենում ընդունող երկրի քաղաքացիներին: Հատուկ ուշադրություն է դարձվում նրանց ընտանիքների անդամներին՝ նույնպես տրամադրելով հիշատակված իրավունքները: Անդամ պետություններն իրենցից կախված բոլոր միջոցներով նպաստում են ընտանիքների վերամիավորմանը:

3.1.2 Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված կոնվենցիաներ՝

- **«Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին»** կոնվենցիա.

Կոնվենցիան ընդունվել է 2005 թ., անդամակցում է 34 պետություն: ՀՀ-ն վավերացրել է 2008թ. մարտի 20-ին: Կոնվենցիայի շրջանակներում ներառված խնդիրներն ու դրանց լուծումները գրեթե նույնանման են թրաֆիքինգի կանխարգելմանն ուղղված ՄԱԿ-ի կոնվենցիային: Ի տարբերություն ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ Եվրոպայի խորհրդի սույն կոնվենցիան նախատեսում է հաշվետվության մեխանիզմ, և փաստաթուղթը վավերացրած երկրները պարտավորություն ունեն ներկայացնելու ազգային զեկույց կոնվենցիայի դրույթների կատարման վերաբերյալ: Կոնվենցիայի մասնակից պետությունների կողմից ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքը վերահսկելու նպատակով Եվրոպայի խորհրդում ստեղծվել է մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի ԵԽ փորձագիտական խումբ (GRETA), որը մշակել է ազգային զեկույցների ներկայացման ձևաչափը և ժամանակացույցը: Հայաստանի ազգային զեկույցի մշակումը և ընդունումը նախատեսված է 2011 թվականին:

- **«Եվրոպական վերանայված սոցիալական խարտիա».**

Վերանայված խարտիան ընդունվել է 1996թ.: Խարտիային անդամակցում է 47 պետություն: Հայաստանն անդամակցում է 2004թ.-ից: Փաստաթղթի հոդված 18-19-ը, որոնց միացել է նաև Հայաստանը, վերաբերում են Կողմերի տարածք անձանց՝ զբաղվածության նպատակով տեղաշարժին:

Խարտիայի վերոհիշյալ հոդվածները վավերացրած երկրները մասնավորապես պարտավորվում են իրենց երկրներում ապահովել աշխատանքային միգրանտների շրջանում անվճար խորհրդատվական ծառայություն, տրամադրել ճիշտ տեղեկատվություն և ազգային օրենսդրության մակարդակով պայքարել էմիգրացիային և իմիգրացիային առնչվող ապակողմնորոշիչ քարոզչության դեմ:

Միաժամանակ, անդամ պետությունների առջև պահանջ է դրվում սեփական քաղաքացիների և օրինական իմիգրանտների նկատմամբ ազգային օրենսդրությամբ ամրագրելու հավասար իրավունքներ այնպիսի հարցերում, ինչպիսիք են՝ աշխատանքային պայմանները, միություններին անդամակցությունը, հարկերի և սոցիալական վճարների մուծումը և դատարան դիմելը:

- **«Աշխատանքային միգրանտների իրավական կարգավիճակի մասին»** թիվ 93 կոնվենցիա (ՀՀ-ն դեռևս չի անդամակցում).

ԵԽ թիվ 93 կոնվենցիան ընդունվել է 1977թ.: Կոնվենցիային անդամակցում է 11 պետություն: Կոնվենցիան իր սահմանած պարտավորություններով նման է ԱՄԿ թիվ 97 կոնվենցիային: Պայմանագիրը բացառապես տարածվում է օրինական աշխատանքային միգրանտների վրա: Այն վավերացրած երկրները պարտավորվում են միջոցներ կիրառել **բնագավառում փարվող ապակողմնորոշիչ քարոզչության դեմ**, անդամ պետություններին տեղեկատվություն հաղորդել երկրի միգրացիոն քաղաքականության և օրենսդրության վերաբերյալ, ինչպես նաև դյուրացնել իրենց տարածքում միգրանտների մուտքը, կեցությունը և վերադարձը:

Եթե մի անդամ պետության տարածքից մյուսի տարածք տեղափոխվող միգրանտների քանակը բավականին մեծ է, շահագրգիռ երկրների լիազոր մարմինները կնքում են (եթե դա անհրաժեշտ է կամ ցանկալի), համաձայնագրեր՝ նպատակ ունենալով կարգավորել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերը:

Ավելին, ԵԽ-ի այս փաստաթուղթը կազմում է Սոցիալական խարտիայի մասը. եթե Խարտիայում աշխատանքային միգրացիայի մասին դրույթները ընդհանուր են ձևակերպված, ապա Կոնվենցիան մասնավորեցնում է, բացում է Խարտիայի 18-19 հոդվածների կետերը:

3.1.3 Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից ընդունված կոնվենցիաներ՝

- «Միգրացիայի բնագավառում չարաշահումների և աշխատող միգրանտներին հնարավորությունների և վերաբերմունքի հավասարության ապահովման մասին» թիվ 143 կոնվենցիա

Կոնվենցիան ընդունվել է 1975թ.: Կոնվենցիային անդամակցում է 23 պետություն: Այն ՀՀ-ի կողմից վավերացվել է 2006թ. հունվարի 27-ին: Կոնվենցիան անդրադառնում է բոլոր աշխատող միգրանտների իրավունքների պաշտպանության, նրանց անօրինական տեղաշարժերը կանխելու, դրանք կազմակերպողներին բացահայտելու և պատասխանատվության ենթարկելու հետ կապված հարցերին:

Կոնվենցիան ներառում է ինչպես միգրանտների նկատմամբ թույլ տրվող չարաշահումների դեմ պատժամիջոցների կիրառմանն ուղղված միջոցառումները, այնպես էլ անդամ պետությունների կոնկրետ պարտավորություններ. մշակել և իրականացնել ազգային քաղաքականություն՝ ուղղված միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքի անդամների աշխատանքի և զբաղվածության, սոցիալական ապահովության, արհեստակցական և մշակութային կազմակերպություններին մասնակցության հարցում իրավահավասարության սկզբունքի պահպանմանը:

Մի շարք դրույթներ անմիջականորեն առնչվում են անկանոն միգրացիայի կանխմանն ուղղված միջոցառումների կազմակերպմանը՝ մասնավորապես՝ անօրինական զբաղվածության բացահայտման և աշխատանք փնտրող միգրանտների անօրինական գաղտնի տեղաշարժեր կազմակերպողների դեմ միջոցների ձեռնարկման առումով:

- «Զբաղվածության համար միգրացիայի մասին» թիվ 97 կոնվենցիա (թիվ 86 երաշխավորությամբ)

Կոնվենցիան ընդունվել է 1949թ.: Կոնվենցիային անդամակցում է 49 պետություն: Այն ՀՀ-ի կողմից վավերացվել է 2006թ. հունվարի 27-ին:

Կոնվենցիան վավերացրած երկրները պարտավորվում են սեփական քաղաքացիների և օրինական իմիգրանտների նկատմամբ ազգային օրենսդրությամբ ամրագրել հավասար իրավունքներ աշխատավարձի, աշխատաժամանակի, արտաժամյա աշխատանքի, վճարվող արձակուրդների, աշխատանքի իրականացման համար ընդունելի տարիքի, կանանց, անչափահասների աշխատանքի, արհեստակցական միություններին անդամակցության, հարկերի և սոցիալական վճարների մուծման և դատարան դիմելու հարցերում:

ԱՄԿ-ի 1949 թ. թիվ 97 կոնվենցիային լրացնում է ԱՄԿ-ի 86 երաշխավորությունը: Երաշխավորությունը, հավելելով ԱՄԿ-ի թիվ 97 կոնվենցիայի դրույթները, մասնավորեցնում է նրանում տեղ գտած նվազագույն պայմանները, որոշակիացնում, թե ովքեր են պարտավոր դրանք իրականացնել և ինչպիսի մեխանիզմներով: Չնայած ԱՄԿ-ի թիվ 97 կոնվենցիայի ընդունման վաղեմությանը, այն ընդհանուր առմամբ պահպանում է իր հրատապությունը և կիրառելի է բազմաթիվ պետությունների կողմից:

- «Աշխատանքի տեղավորման մասնավոր գործակալությունների վերաբերյալ» թիվ 181 կոնվենցիա (ՀՀ-ն դեռևս չի անդամակցում)

Կոնվենցիան ընդունվել է 1997 թ.: Կոնվենցիային անդամակցում է 23 պետություն: Հիշատակված կոնվենցիայով ԱՄԿ-ն ամրագրեց, որ աշխատանքի տեղավորման ոլորտում կարող են հավասարապես մասնակցել աշխատանքի տեղավորման թե պետական և թե մասնավոր գործակալությունները: Անդամ պետությունը սահմանում է աշխատանքի տեղավորման մասնավոր գործակալությունների գործունեությունը կարգավորող կանոններ՝ **լիցենզավորման կամ հավաստագրման համակարգի միջոցով**, եթե արդեն սահմանված այլ կանոններ չկան ազգային օրենսդրությանն ու փորձին համապատասխան:

Աշխատանքի տեղավորման մասնավոր գործակալությունները աշխատողներից ուղղակի կամ անուղղակի, լրիվ կամ մասնակի **չեն բռնազանձում հոնորարներ** կամ այլ տուրքեր: Համաձայն կոնվենցիայի՝ անդամ պետությունը միջոցներ է ձեռնարկում, որպեսզի զբաղվածության մասնավոր գործակալությունները չօգտագործեն երեխաների աշխատանքը:

- «Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին» թիվ 29 կոնվենցիա

Կոնվենցիան ընդունվել է 1930 թ.-ին: Կոնվենցիային անդամակցում է 174 պետություն: Այն ՀՀ-ի կողմից վավերացվել է 2004թ.:

ԱՄԿ-ի ամեն մի անդամ պետություն, որը վավերացնում է հետևյալ կոնվենցիան պարտավորվում է հնարավորինս սեղմ ժամկետներում վերացնել ցանկացած տեսակի հարկադիր կամ պարտադիր աշխատանք:

Հարկադիր կամ պարտադիր աշխատանք է համարվում այն աշխատանքը կամ ծառայությունը, որը սպառնալիք կամ վտանգ է ներկայացնում անձի համար, վերջինիս ոչ ինքնակամ կերպով այդ աշխատանքում ներգավված լինելու պատճառով: Սակայն այդ դրույթները չեն վերաբերում զինվորական ծառայությանը, անձի քաղաքացիական պարտքը կատարելուն, դատարանի կողմից նշանակված որոշմանը և արտակարգ իրավիճակներին:

- **«Հարկադիր աշխատանքի վերացման մասին»** թիվ 105 կոնվենցիա

Կոնվենցիան ընդունվել է 1957 թ.-ին: Կոնվենցիային անդամակցում է 169 պետություն: Այն ՀՀ-ի կողմից վավերացվել է 2004թ.: Կոնվենցիան վավերացրած յուրաքանչյուր պետություն պարտավորվում է աշխատավորների նկատմամբ թույլ տրվող չարաշահումների դեմ պատժամիջոցների կիրառմանն ուղղված արդյունավետ միջոցառումներ ձեռնակել հարկադիր կամ պարտադիր աշխատանքը՝ իր բոլոր ձևերի հետ հանդերձ վերացնելու համար: Այդ ձևերը ներառում են աշխատողներին տրված պատիժները գործադրություններին մասնակցելու, քաղաքական հայացքներ ատահայտելու, այդ թվում՝ ընդդեմ հաստատված քաղաքական համակարգի, աշխատանքում կարգուկանոն հաստատելու կամ այլ դաստիարակություն ունենալու պատճառով:

- **«Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին»** թիվ 182 կոնվենցիա:

Կոնվենցիան ընդունվել է 1999 թ.-ին: Կոնվենցիային անդամակցում է 173 պետություն: Այն ՀՀ-ի կողմից վավերացվել է 2006թ.: Կոնվենցիան վավերացրած ամեն մի անդամ երկիր պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկի՝ արգելելու այն իրավիճակները, որոնք նպաստում են երեխաների հետագա վաճառքին կամ ռազմական գործողություններում ներգրավմանը, ինչպես նաև պետք է ապահովի նրանց հասարակության մեջ ինտեգրումը և անվճար տարրական կրթության ստացումը:

3.1.4 ԱՊՀ շրջանակներում կնքված համաձայնագրեր՝

- **«Աշխատանքային միգրացիայի և աշխատանքային միգրանտների սոցիալական պաշտպանության ոլորտներում համագործակցության մասին»** համաձայնագիր

Համաձայնագիրը ստորագրվել է 1994թ Մոսկվայում բոլոր ԱՊՀ պետությունների կողմից: Համաձայնագրի կարևոր դրույթներից թերևս կարելի է առանձնացնել այն, որ Կողմերից յուրաքանչյուրը փոխադարձաբար ճանաչում է հետևյալ փաստաթղթերը՝ դիալոմները, կրթության մասին վկայականը, կոչման, որակավորման համապատասխան փաստաթղթերը, աշխատանքային ստաժը հաստատող փաստաթուղթը: Դրանով իսկ հուսալի նախադրյալներ են ստեղծվում օրինական աշխատանք գտնելու հնարավորության համար:

- **«Անօրինական միգրացիայի դեմ պայքարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին»** համաձայնագիր

Համաձայնագիրը ստորագրվել է 1998թ մարտի 6-ին Մոսկվայում բոլոր ԱՊՀ պետությունների կողմից: Ըստ համաձայնագրի՝ անօրինական միգրացիայի դեմ պայքարում կողմերը համագործակցում են միգրացիոն վերահսկողության, օտարերկրացիների հաշվառման, անօրինական միգրանտների արտաքսման մեխանիզմների մշակման, բնագավառում Կողմերի ազգային օրենսդրության ներդաշնակեցման և անօրինական միգրացիայի մասին տեղեկատվության փոխանակման հարցերում:

Ի լրումն վերոհիշյալ համաձայնագրի ձեռնարկվել են նաև հետևյալ միջոցառումները.

- 2000թ. հունվարի 21-ին ընդունվել է «Անօրինական միգրանտների և այն անձանց վերաբերյալ, որոնց մուտքը անօրինական միգրացիայի դեմ պայքարում ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության մասին Համաձայնագրի անդամ պետություններ արգելված է, իրենց գործող ազգային օրենսդրության համաձայն փոխադրվելու ընդհանուր շտեմարանի ձևավորման, և անօրինական միգրացիայի վերաբերյալ փոխանակման կարգը»
- Համաձայնագրի կիրարկումն ապահովելու նպատակով 2004թ.-ի ապրիլի 16-ին ձևավորվել է համաձայնագրի անդամ պետությունների համապետել հանձնաժողովը:
- 2004թ.-ի սեպտեմբերի 16-ին ընդունվել է «Անօրինական միգրացիայի դեմ պայքարում ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության մասին Հայեցակարգը»
- Ընդունվել և իրականացվում է «Անօրինական միգրացիայի հակազդեցության ոլորտում 2009-2011թթ.-ին ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության ծրագիրը»

- Ներկայումս մշակման փուլում է գտնվում «2012-2014թթ. անօրինական միգրացիայի հակազդմանն ուղղված ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության ծրագրի» նախագիծը:

3.2 Երկկողմ մակարդակում

Երկկողմ մակարդակով անկանոն միգրացիայի դեմ պայքարի ուղղությամբ կնքված պայմանագրերն առնչվում են ռեադմիսիոն (հետընդունման) և աշխատանքային միգրացիայի խնդիրներին:

Հայաստանը ռեադմիսիոն համաձայնագրեր է ստորագրել՝

- Դանիայի Թագավորության
- Շվեյցարիայի Դաշնային խորհրդի
- Լիտվայի Հանրապետության
- Գերմանիայի Դաշնային Հանրապետության
- Բուլղարիայի Հանրապետության
- Շվեդիայի Թագավորության
- Բենիլյուքսի երկրների
- Չեխիայի Հանրապետության
- Նորվեգիայի Թագավորության
- Ռուսաստանի Դաշնության հետ:

Քանակություններն ընթացքի մեջ են՝

- Էստոնիայի և
- Կիպրոսի հետ:

Ներկայումս ընթացքի է մեջ է նաև Եվրամիություն-Հայաստան ռեադմիսիոն համաձայնագիր կնքելու գործընթացը, որն ավելի լայն հեռանկարներ է բացում խնդրի կարգավորման համար:

Ընդունող երկրների հետ ռեադմիսիոն համաձայնագրերի և դրանց կիրառման արձանագրությունների վավերացումը հնարավորություն կտա Կողմերի տարածքներում առանց թույլտվության գտնվող անձանց վերադարձի առնչությամբ մուտքի երկրների և Հայաստանի Հանրապետության համապատասխան գերատեսչությունների միջև գոյություն ունեցող համագործակցությանը տալ իրավաբանական ձևակերպում համաձայնագրով սահմանելով Կողմերի իրավասու մարմինները, սահմանի հատման կետերը, փաստաթղթերի ցանկը, անձի հետընդունման դիմումի ներկայացման կարգը, ժամկետները և այլն:

Ռեադմիսիոն համաձայնագրերը հնարավորություն են տալիս վերադարձվող քաղաքացիների ռեինտեգրացիայի օժանդակությանն ուղղված ծրագրային առաջարկներ ներկայացնել ընդունող երկրներին (նման առաջարկների քննարկման առաջին նախապայմանը Կողմերի միջև «վերադարձի» պայմանագրի առկայությունն է): Վերադարձվող քաղաքացիների ռեինտեգրացիայի օժանդակությանն ուղղված ծրագրերի վարումը խիստ կարևոր է վերադարձվող միգրանտների հետագա ռեցիկլացիան կանխելու գործում:

Նմանատիպ համաձայնագրի կնքումը կարող է դրական ազդեցություն ունենալ ՀՀ-ի միջազգային վարկի վրա այն առումով, որ մեր պետությունը պատրաստակամ է քաղաքակիրթ լուծումներ գտնել այնպիսի մի կարևոր և նուրբ հիմնախնդրի առնչությամբ, ինչպիսին է անօրինական միգրացիան:

Աշխատանքային միգրացիայի ոլորտում երկկողմ համաձայնագրեր են կնքված՝

Վրաստանի (1993թ.)

Ռուսաստանի (1994թ.)

Ուկրաինայի (1995թ.) և

Բելառուսի (2000թ.) հետ:

Ըստ էության, գործնականում այդ համաձայնագրերը մեխանիզմների բացակայության պատճառով կիրառություն չունեն, ուստի վերանայման կարիք ունեն: Այդ ուղղությամբ որոշակի առաջընթաց է նկատվում. խնդիրը կարևորվել է ձևավորված հայ-ռուսական համատեղ աշխատանքային խմբի կողմից, որի շրջանակներում համագործակցության արդյունքում ռուսական կողմը մշակել է նոր համաձայնագրի նախագիծ: Աշխատանքային խումբն ունեցել է երկու հանդիպում, առաջինը՝ Մոսկվայում 2010թ. Հունիսի 1-ի, երկրորդը՝ Երևանում 2011թ. Հունիսի 15-16-ին:

Խնդրի շուրջ Հայաստանի հետ համագործակցելու առաջարկներ կան Պարսից ծոցի առանձին երկրների կողմից՝ մասնավորապես Քատարի Պետության և Օմանի: Ներկայումս նախաստորագրված է

«Քատարի Պետությունում հայաստանյան աշխատուժի ներգրավման պայմանագիրը»: Բնագավառում բանակցության գործընթաց սկսելու հարցում իր հետաքրքրությունն է արտահայտել նաև Արաբական Միացյալ Էմիրությունները:

Աշխատանքային միգրացիայի բնագավառում երկկողմ համաձայնագիր կնքելու շուրջ ներկայումս եվրոպական երկրների շարքում բանակցություններ են ընթանում Ֆրանսիայի և Բուլղարիայի հետ:

Վերոհիշյալ համաձայնագրերը միգրանտների համար կծառայեն որպես այլընտրանք անկանոն միգրանտի կարգավիճակում հայտնվելու և դրանից բխող անցանկալի վիճակներից խուսափելու համար:

Այսպիսով, օրինական աշխատանքային միգրացիայի հնարավորությունների ընդլայնման միջոցով լայն հեռանկարներ են բացվում անօրինական միգրացիայի կանխարգելման համար, որն ավելի կամրապնդվի և կզարգանա 2011թ. հոկտեմբերի 27-ին Լյուքսեմբուրգում ստորագրված Հայաստան - Եվրոպական Միություն «Շարժունակության շուրջ գործընկերություն» հռչակագրով սահմանված նախաձեռնությունների պայմաններում:

3.3 Ազգային մակարդակում

Բացի բնագավառում երկկողմ և բազմակողմ մակարդակով միջազգային իրավական ակտերին Հայաստանի Հանրապետության անդամակցությունից կամ դրան ուղղված քայլերից, Հայաստանը՝ որպես ծագման երկիր, կիրառում է անօրինական միգրացիայի դեմ պայքարի իր քաղաքականությունը:

Անօրինական միգրացիայի դեմ արդյունավետ պայքար ծավալելու համար ՀՀ-ում կիրառվում է համապարփակ մոտեցում: Այլ կերպ ասած, այս երևույթի առաջացման և զարգացման յուրաքանչյուր փուլում ձեռնարկվում են համապատասխան, յուրահատուկ քայլեր:

Երևույթի առաջացումը և զարգացումը պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ փուլերի, որոնց պատճառների և դրանց վերացման ուղղությամբ անհրաժեշտ քայլերի մասին կխոսվի համապատասխան բաժիններում՝

- I փուլ – Անօրինական միգրացիայի սաղմնավորում
- II փուլ – Մուտքի երկրներում հայտնաբերված անօրինական միգրանտներ
- III փուլ – Վերադարձից հետո ընկած ժամանակահատված
- IV փուլ – Աշխատանքային միգրացիա երևույթի կանոնակարգում:

Չնայած Հայաստանից ծնունդ առնող անօրինական միգրացիայի երևույթի տարածվածությանը, ՀՀ վարչական օրենսգրքում այն սահմանված չէ, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքում չի դիտվում որպես հանցատեսակ, ինչպես թրաֆիքինգը, մինչդեռ այս դեպքում նույնպես առկա են ընդունված կանոնների շրջանցում վիզայի կազմակերպման, մուտքի երկրներ տեղափոխման և դիմավորման հարցերում:

Բաժին 2. Անկանոն միգրացիան ծնող պատճառներն ու հետևանքները

1. Հայաստանից ծնունդ առնող անկանոն միգրացիան

Այս գլխում փորձ է արվել ներկայացնել Հայաստանից ծնունդ առնող անկանոն միգրացիան՝ հիմնվելով հիմնականում ՀՀ-ում բնագավառում կատարված հետազոտությունների վրա:

ՀՀ Սահմանադրության հոդված 25-ով հռչակվում է ՀՀ քաղաքացիների և ՀՀ-ում բնակվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր անձի ազատ տեղաշարժի իրավունքը: Այս իրավիճակում ՀՀ քաղաքացիների էմիգրացիոն հոսքերը մեր հանրապետությունից ելքի պահին օրենքի տեսանկյունից գործնականում ամբողջությամբ օրինական են:

Օրինականորեն սկիզբ առնող այդ հոսքերը մասամբ անօրինական են դառնում հետո՝ մի մասը այլ երկրներ մուտք գործելու պահին, իսկ հիմնական մասը այնտեղ մուտք գործելուց հետո, երբ լրանում է նրանց տվյալ երկրում օրինականորեն գտնվելու իրավունքի ժամկետը: Այդ մասին է վկայում **ՄՄԿ «Անկանոն միգրացիան Հայաստանից և միգրանտների անօրինական սահմանափակումները»** 2002թ. հետազոտությունը, որն առանձնացնում է անկանոն միգրացիայի և ապօրինի սահմանափակումների երեք մեթոդներ՝

1. **Մուտք վիզայով, այնուհետև վիզային ռեժիմի խախտում:** Վիզա ստանալու համար տարբեր մեթոդներ են կիրառվում: Դրանցից մեկը արտասահման մեկնող մշակութային կամ սպորտային խմբերի անվանացուցակին անուններ ավելացնելն է: Ինչպես նշել են Հայաստանում Ֆրանսիայի, Գերմանիայի և Միացյալ Նահանգների դեսպանատների հյուպատոսական բաժինները, հազվադեպ է պատահում, որ խմբի բոլոր անդամները վերադառնան նմանատիպ ուղևորություններից:
2. **Ապօրինի փոխադրողների (smuggler) միջնորդությամբ ձեռք բերվող մուտքի իրավունք:**
3. **Ժամանում ապաստան հայցելու պատրվակով:**

«Հայաստանի և սոցիալական հարցերի նախարարության և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից 2008թ. անցկացված «ՀՀ արտաքին և ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտության զեկույցում» անդրադարձ է կատարվել նաև արտերկրում գտնվող ՀՀ քաղաքացի հանդիսացող միգրանտների կացության կարգավիճակներին: Այսպես, միգրանտների 49.4%-ը գտնվելու երկրում ունեցել է ժամանակավոր հաշվառում, 22.5%-ը՝ աշխատելու իրավունք, իսկ քաղաքացիություն ունեցել են միայն նրանց 6.6%-ը: Փախստականները և/կամ ապաստան հայցողները կազմել են շուրջ 3%: Հարցմամբ տեղեկություններ է հավաքագրվել նաև այն մասին, թե արդյոք արտերկրում գտնվող միգրանտներն ունեցել են աշխատանք և հիմնականում ինչպիսի աշխատանք են նրանք կատարել:

Արտերկրում գտնվող չափահաս միգրանտների կացության կարգավիճակներն ըստ վերոհիշյալ զեկույցի ունի հետևյալ պատկերը.

| Կացության կարգավիճակը | Տ/տ անդամների թվաքանակը | %-ով ընդհանուրի նկատմամբ |
|----------------------------------|--------------------------------|---------------------------------|
| Քաղաքացիություն | 36 | 6.6 |
| Բնակության իրավունք | 23 | 4.2 |
| Աշխատելու իրավունք | 122 | 22.5 |
| Փախստական և/կամ ապաստան հայցող | 15 | 2.8 |
| Ժամանակավոր հաշվառում (գրանցում) | 268 | 49.4 |
| Այլ | 48 | 8.8 |
| Տեղյակ չեն | 7 | 1.3 |
| Չնշվածներ | 24 | 4.4 |
| Ընդամենը | 543 | 100.0 |

Արտերկրում աշխատող միգրանտների միայն 30.0%-ի աշխատանքն է օրինական կերպով ձևակերպված եղել, 13.3%-ին՝ ոչ, իսկ 56.7%-ի վերաբերյալ ռեսպոնդենտները դժվարացել են պատասխանել այս հարցին:

Հարցումով պարզվել է նաև, որ արտերկրում գտնվելու ընթացքում միգրանտներից 7.3%- ի հետ պատահել են անձնագրերի բռնությամբ առգրավման դեպքեր: Ընդ որում, մեկնելուց առաջ տվյալ երկրում միգրանտներին վերաբերող օրենսդրության և նրանց իրավունքների մասին տեղեկացված են եղել հարցվածների միայն շուրջ 40%-ը, այն դեպքում, երբ 60%-ը եղել է բոլորովին անտեղյակ:

ԱՄԿ «Արտագնա աշխատանքային միգրացիան Հայաստանից 2008-2009 թվականներին. աշխատանքային միգրացիայի միտումների և միգրացիոն փորձառությունների վերլուծություն» 2010թ. մայիսի վերջնական զեկույցը, որը հիմնված է տնային տնտեսությունների ընտրանքային հարցման և արագընթաց որակական գնահատման վրա, փաստում է, որ Հայաստան վերադարձած աշխատանքային միգրանտների թվի մեկ հինգերորդից քիչ էին այն մարդիկ, ովքեր դեռ մինչև արտերկիր մեկնելը լիովին ծանոթ էին միգրացիոն օրենքներին և միգրանտների իրավունքներին նպատակակետ երկրներում: Թեև հնարավոր է, որ հարցվողների կողմից իրենց գիտելիքների մակարդակի գնահատումը սուբյեկտիվ լինի, հարցման արդյունքներով հաստատվել է, որ միգրացիոն օրենքներին լիովին ծանոթ վերադարձած միգրանտների տեսակարար կշիռը *հաջողակ* միգրանտների թվում կրկնակի գերազանցում էր հարկադիր

աշխատանքի նպատակով թրաֆիկինգի զոհերինը: Ըստ զեկույցի «հաջողակ միգրանտներ» ասելով պետք է նկատի ունենալ այն անձանց, ում աշխատանքային միգրացիայի ընթացքում չի եղել ոչ խաբեություն, ոչ էլ շահագործում կամ պարտադրանք:

Հարցման տվյալներից պարզ է դարձել, որ վերադարձածների գերակշիռ մասը (87%) նպատակակետ երկրներում աշխատել է ապօրինաբար (առանց աշխատանքի թույլտվության): Նրանցից 8%-ը չեն ունեցել նաև օրինական փաստաթղթեր նպատակակետ երկրում բնակվելու համար: Ըստ ստացված տվյալների՝ նպատակակետ երկրում օրինական կարգով աշխատելու հնարավորություն ունեցող միգրանտների տոկոսն ամենաբարձրն էր հաջողակ միգրանտների և ամենացածրը՝ հարկադիր աշխատանքի նպատակով թրաֆիկինգի զոհերի շրջանում:

Հարցման տվյալները վկայում էին, որ վերադարձած աշխատանքային միգրանտների 26,5%-ը գրավոր պայմանագրով էին աշխատում: Այս տվյալն իսկապես զարմանալի է, հաշվի առնելով, որ գրավոր պայմանագրի հիման վրա աշխատած լինելու մասին հայտնած անձանց երեք քառորդը նպատակակետ երկրում ապօրինաբար են աշխատել (առանց քաղաքացիության կամ աշխատանքի թույլտվության) և, հետևաբար, օրինական աշխատանքային պայմանագիր չէին կարող ունենալ: Պայմանագրի օրինականության հարցը կարևոր է և արժանի լրացուցիչ հետազոտման, հաշվի առնելով գրավոր պայմանագրեր ունեցող և չունեցող աշխատողների տեսակարար կշիռը հաջողակ, շահագործման ենթարկված, խաբված և շահագործման ենթարկված միգրանտների և հարկադիր աշխատանքի նպատակով թրաֆիկինգի զոհերի շրջանում: Գրավոր պայմանագրերը, անկախ դրանց օրինական լինելուց, կարող են մեծապես պարտավորեցնող լինել: Առանց միգրացիոն և աշխատանքային օրենքների պատշաճ իմացության՝ միգրանտները հազիվ թե ի զորու լինեն գնահատել պայմանագրի օրինականությունը, և հաստատվել էր, որ այս խումբը ներկայացնող վերադարձածների շրջանում կրթության և իրազեկության մակարդակն ամենացածրն էր:

Վերադարձածների մեծ մասն աշխատանքի էր ընդունվել բարեկամների կամ ընկերների օգնությամբ (69,9%): Վերադարձածների շուրջ մեկ հինգերորդին աշխատանքն անմիջականորեն առաջարկել էր գործատուն (18,1%): Այլ եղանակով (մասնավոր միջնորդներ, զբաղվածության մասնավոր գործակալություններ, աշխատանքի վերաբերյալ հայտարարություններ կամ սեփական գործի նախաձեռնում) աշխատանք ստացած վերադարձածների տեսակարար կշիռը շատ փոքր էր:

Մասնավոր միջնորդների միջոցով աշխատանք ստացածների տեսակարար կշիռն ամենաբարձրն էր խաբված և շահագործման ենթարկված միգրանտների և հարկադիր աշխատանքի նպատակով թրաֆիկինգի զոհերի, և ամենացածրը՝ հաջողակ միգրանտների շրջանում: Հետագա վերլուծությամբ հաստատվել է, որ այն վերադարձածները, ովքեր աշխատանք էին գտել մասնավոր միջնորդների միջոցով, ավելի մեծ չափով էին վտանգված խաբեության, շահագործման և պարտադրանքի ենթարկվելու իմաստով, քան մյուսները:

Ըստ հարցման տվյալների՝ պարտադրանքի առավել տարածված միջոցն է եղել աշխատավարձի չվճարումը: Որպես թրաֆիկինգի զոհեր նույնականացված վերադարձած միգրանտներից յուրաքանչյուր հինգերորդը (21%-ը 97%-ից) հաղորդել է, որ արտերկրում եղած ժամանակ ենթարկվել է պարտադրանքի այս եղանակին: Քանի որ միգրանտների արտերկիր մեկնելու հիմնական նպատակը Հայաստանում իրենց ընտանիքի կարիքները հոգալու համար գումար վաստակելն էր և, ըստ միգրանտների, հիմնական խնդիրը կապված է եղել բավականաչափ եկամուտ չստանալու հետ, պարզ է դառնում, թե ինչու էին հարկադիր աշխատանքի դեպքերը մեծ մասամբ տեղի ունենում գործատուների կողմից միգրանտներին վերահսկելու նպատակով ֆինանսական լծակների գործածման հետևանքով: Անկախ նրանից՝ միգրանտներին հաջողվել է, թե ոչ հետ ստանալ իրենց հասանելիք վարձատրությունը, հենց այն փաստը, որ նրանք ստիպված են եղել երկարաձգել իրենց կացությունն ու աշխատանքն արտերկրում, վկայում է հարկադիր աշխատանքի երկուսի հիման:

Ֆոկուս խմբերի մասնակիցները միահամուռ դիտարկման են հանգել, որ 2009թ-ին շահագործող և հարկադիր աշխատանքի իրավիճակների մեծ մասը տեղի էր ունենում ֆինանսական ճգնաժամի հետ կապվող «նոր իրողությունների» քողի տակ:

Հայաստանի գյուղական շրջաններից կրթական ավելի ցածր մակարդակ ունեցող միգրանտներն ամենից հաճախ են առնչվել խաբեության, շահագործման կամ պարտադրանքի տարրերի հետ:

Վերադարձած այն միգրանտների տեսակարար կշիռը, ովքեր աջակցություն ստանալու համար դիմել են այլ աղբյուրներին, օրինակ՝ արտերկրում ՀՀ դեսպանատներին կամ հյուպատոսարաններին, Հայաստանի կամ արտերկրի ՀԿ-ներին, կամ նպատակակետ երկրների իշխանություններին, աննշան էր:

Ուսումնասիրությամբ հաստատվել է, որ խաբեության, շահագործման կամ պարտադրանքի զոհ դարձած միգրանտները չափազանց հազվադեպ են օգնության համար դիմում որևէ մեկին՝ բացի բարեկամներից կամ ընկերներից: Դրա պատճառն այն է, որ կամ նրանք ճիշտ չեն գնահատում իրադրությունը, քանի որ իրենք են համաձայնել դրա հետ, կամ անտեղյակ են միգրանտների իրավունքներից, կամ էլ՝ որովհետև համոզված են, որ իրենց խնդիրները երկրում ապօրինի կարգավիճակ ունենալու բնական հետևանքներն են, և ըստ այդմ հանգում են այն եզրակացության, որ որևէ մեկն ի գորու չէ իրենց օգնել:

2002թ. ՄՄԿ պատվերով Հայկական սոցիոլոգիական ընկերակցության կողմից անցկացված **«Բնակչության տեղեկացվածությունը միգրացիայի խնդիրների վերաբերյալ»** սոցիոլոգիական ուսումնասիրությունն արձանագրել է, որ՝

- ՀՀ բնակչության 40%-ը տեղյակ չէ մուտքի թույլտվության (վիզայի) անհրաժեշտության մասին,
- 58.7%-ը տեղյակ չէ աշխատանքի թույլտվության մասին,
- 55% -ը՝ կարծում է որ ապաստան հայցող անձինք կարող են աշխատել
- 49%-ը՝ որ անօրինական ճանապարհներով այլ երկրներ տեղափոխված իրենց հայրենակիցներին ի վերջո, հաջողվում է այնտեղ հիմնավորվել
- 61%-ը ցանկություն է հայտնել լրացուցիչ տեղեկություններ ստանալ օրինական միգրացիայի՝ մասնավորապես աշխատանքային միգրացիայի հնարավորությունների մասին:

Հարցման արդյունքներից պարզ է դառնում, որ անտեղյակությունը ուղղակիորեն ծնում է անօրինական միգրացիոն վարք:

ՄՄԿ-ի մի այլ՝ **«Անկանոն միգրացիան Հայաստանից և միգրանտների անօրինական սահմանափակումները»** 2002թ. հետազոտության համաձայն՝ 1998թ.-ին ՀՀ վերադարձված 1500 ՀՀ քաղաքացիների 92%-ը մեկ տարի անց կրկին մեկնել էր Հայաստանից: Բազմաթիվ միգրանտներ փորձում են բոլոր միջոցները կրկին մեկնելու այն երկրները, որտեղից վերադարձել են կամ այդ երկրի հետ ընդհանրություն ունեցող այլ երկիր:

Հետազոտությունը արձանագրում է, որ Հայաստանում, մասնավորապես Երևանում, գործող բազմաթիվ ճամփորդական գործակալություններ հանդես են գալիս միջնորդների դերում, որոնք նպաստում են Հայաստանից անկանոն միգրացիային:

Ըստ ԵԱՀԿ պատվերով Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ ՀԿ-ի կողմից 2007թ. իրականացված **«Աշխատանքային միգրացիան Հայաստանից 2005-2007թթ.»** հետազոտության արդյունքների՝ միգրանտների 70.4%-ը աշխատանքը գտել էր դեռևս մեկնումից առաջ (պայմանավորվածություն աշխատանքի նկարագրության, աշխատավարձի չափի և աշխատանքային պայմանների մասին):

Միջնորդավորված ուղևորությունների թիվը կազմում է 65%, որից՝

- 28 %՝ ընդունող երկրում ապրող ընկերներ/ազգականներ
- 12%՝ ընդունող երկրում բնակվող մասնավոր միջնորդներ
- 10%՝ Հայաստանում բնակվող մասնավոր միջնորդներ
- 7%՝ Հայաստանում կամ արտերկրում գործող գործակալություններ

Միգրանտների միայն 12%-ն է գրավոր աշխատանքային պայմանագիր կնքել: Դա վկայում է անօրինական միգրացիայի ծավալի մասին:

Վերոհիշյալ հետազոտության շրջանակում կատարված հարցազրույցները ցույց են տվել, որ միգրանտները ծանոթ են եղել ընդունող երկրների միգրացիոն ռեժիմին և աշխատանքային օրենսդրությանը, ներառյալ ՌԴ, և գիտակցել են, որ նրանց անօրինական կեցությունը և անօրինական աշխատանքը

կսահմանափակի իրենց իրավունքները և ազատությունները: Միաժամանակ ՌԴ-ում աշխատող միայն մի քանի հարցված միագրանտներ են ունեցել օրինական աշխատանքի համար պահանջվող բոլոր փաստաթղթերը՝ կեցության և աշխատանքի թույլտվություն և աշխատանքային պայմանագիր:

Աշխատանքային միգրանտների ճնշող մեծամասնությունը հաշվառվել է որպես զբոսաշրջիկ և չի ունեցել աշխատանքի թույլտվություն: Այս խմբի միգրանտների մեծամասնությունը երբևէ չի երկարացրել կացության թույլտվության ժամկետը: Միգրանտներից մի քանիսը նույնիսկ նշել են, որ իրենց գրանցումը կեղծ է եղել: Օրենքը շրջանցելու հիմնական պատճառն այն է եղել, որ կարիք չի զգացվել վատնել ժամանակ և փող օրինական գործընթացի վրա, քանի որ այն իրենից ներկայացնում է միայն բյուրոկրատական քաշքշուկ և իրավունքների պաշտպանության իրական երաշխիք չի հանդիսանում: Միգրանտները կարծում են, որ օտար երկրում չկա մեկը, ով պատրաստ է զբաղվել իրենց պաշտպանությամբ: Նրանք նշում են, որ իրավունքները, օրենքը և պաշտպանությունը կապված են միայն փողի հետ, և որ կաշառքը կարող է լուծել բոլոր խնդիրները:

Միգրանտներից ստացված ինֆորմացիան պարզորոշ ցույց է տալիս, որ աշխատանքային շահագործումը և աշխատանքային կանոնակարգերի խախտումը նպատակի երկրներում լայն տարածված է, չնայած որ միգրանտները, որպես կանոն դրանից չեն բողոքում: Արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ միգրանտները քիչ են վճարվել կամ ընդհանրապես չեն վճարվել, ստիպված են եղել ապրել և աշխատել անընդունելի պայմաններում կամ վտանգել իրենց կյանքը, աշխատանքի են հրավիրվել կեղծ խոստումներով, աշխատավարձից պահումներ են ունեցել սեփական համաձայնությամբ կամ առանց դրա, կատարել են արտաժամյա աշխատանք, չեն ունեցել հանգստյան օրեր:

Որոշ դեպքերում շահագործումը հանգեցրել է հարկադիր աշխատանքի տարբեր դրսևորումների: Այս առումով հետազոտության արդյունքները կարելի է ամփոփել հետևյալ կերպ: Նախ, որոշ բացառություններով, հարկադիր աշխատանքի տարբեր պարունակող իրավիճակները սովորաբար ուղղակի ֆիզիկական բռնության հետևանք չեն: Երկրորդ, միգրանտները հաճախ մուտք են գործել նպատակի երկիր՝ ընկերների, ծանոթների կամ ընտանիքի անդամների աջակցությամբ, որոնք գտնվում են այդ երկրում: Այս պարագայում նրանց աշխատանքային շահագործման խոցելիությունը շատ բարձր է, հատկապես այն ժամանակ, երբ նրանք ունեցել են անօրինական կարգավիճակ և մշտապես գտնվել են հավանական դեպորտացիայի վախի ներքո: Երրորդ, զոհերը հակված չեն հայտարարելու հարկադիր աշխատանքի փորձի մասին: Նրանք իրավապահ մարմինների հետ համագործակցելու շատ քիչ շարժառիթներ ունեն և շատ քիչ են տեղեկացված իրենց իրավունքների մասին:

Աշխատանքային օրենսդրության տարատեսակ խախտումների հետ մեկտեղ հարցման մի շարք արդյունքներ ուղղակիորեն վկայում են պարտքի գործոնի չարաշահման և այլ բռնությունների մասին: Զգալի թվով միգրանտներ նշում են, որ իրենց ճանապարհորդության արժեքը, բնակարանի վարձը, սննդի արժեքը պահվել են իրենց աշխատավարձից: Այս իրավիճակները կարող են առաջ բերել հարկադիր աշխատանք, եթե պարտքը ողջամտորեն չի նվազեցվում կատարվող աշխատանքի դիմաց: Անհատն ստիպված է լինում շարունակել աշխատանքը, որպեսզի վճարի պարքը, որը չի նվազում, այլ հաճախ նույնիսկ ավելանում է, քանի որ միգրանտը հարկադրված է լինում նոր պարտքեր վերցնել:

2. Անկանոն միգրացիայի պատճառներն ու հետևանքները

Հայաստանի ներկայիս միգրացիոն իրավիճակն ընդհանուր առմամբ մնում է բարդ: Դրա պատճառներն են. գործազրկության բարձր և արժանավայել գոյատևման համար եկամուտների ոչ բավարար մակարդակները, մարդու իրավունքների (քաղաքացիական, տնտեսական, քաղաքական և այլն), իրացման գործում առկա հիմնախնդիրները, ապագայի հանդեպ վստահության ու հավատի զգացման խաթարվածությունը, սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների և տեմպերի ընդգծված տարաձայնի շեղվածությունները և այլն:

Ստորև ներկայացվում են Հայաստանից սկիզբ առնող անկանոն միգրացիայի պատճառներն ու հետևանքները, որոնք քաղված են ոլորտում կատարված տարբեր հետազոտություններից:

ԱՄԿ «Արտագնա աշխատանքային միգրացիան Հայաստանից 2008-2009 թվականներին. աշխատանքային միգրացիայի միտումների և միգրացիոն փորձառությունների վերլուծություն» գեկույցը ցույց է տալիս, որ խաբված և շահագործման ենթարկված միգրանտների խումբը հավաքագրման եղանակի իմաստով առանձնանում էր, քանզի այս խմբում որպես հավաքագրող գրեթե ամբողջապես հանդես էին գալիս զբաղվածության մասնավոր գործակալությունները, և կամքին հակառակ աշխատանքի տեղավորումը, որն ինքնին պարտադրանքի ուժեղ ցուցանիշ է, արձանագրվել է միայն այս խմբում: Ինչու՞ կարող է այսպիսի վարված լինել այս իրավիճակը. այս հարցի հնարավոր պատասխաններ կարելի է համարել վանաձորում անցկացված որակական գնահատման արդյունքները, թեև դրանք չեն կարող ընդհանրացվել և (կամ) վերջնական համարվել: Համենայն դեպս, ֆոկուս խմբերը բացահայտել են մի շատ կարևոր պոտենցիալ վտանգ ներկայացնող խնդիր՝ կապված միգրանտների մեկնումն ու Ռուսաստանում աշխատանքի տեղավորումը կազմակերպող տեղական «ֆիրմաների» հետ: Գնահատման ընթացքում հնարավոր չի եղել պարզել՝ արդյոք դրանք օրինական կարգով գրանցված զբաղվածության մասնավոր գործակալություններ էին, թե գործում էին այդպիսի քրդի ներքո, սակայն փաստն այն էր, որ նման «ֆիրմաների» հետ գործ ունենալը հաճախ հանգեցրել է խնդրահարույց միգրացիոն փորձառությունների, որոնցից մի քանիսի արդյունքում առաջանում էին անգամ աշխատանքի շահագործման նպատակով թրաֆիկինգին բնորոշ իրավիճակներ:

Արտերկիր ապօրինի մուտք գործելու պատճառների բացահայտման տեսանկյունից ուշագրավ իրողություններ են արձանագրվել Եվրոպայի խորհրդի պատվերով **Վ. Գևորգյանի «Անօրինական միգրացիայի դեմ պայքարի ուղղությամբ վարվող քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում»** 2006թ. կատարած հետազոտության արդյունքներով: Հարցմանը մասնակցած փորձագետների մոտ 80%-ը որպես արտերկիր ապօրինի մուտք գործելու գլխավոր պատճառ է նշում ընդունող երկրներ մուտք գործելու օրենսդրության խստությունն ու սահմանափակումներն ընդհանրապես: Այս կարծիքին են հատկապես պետական գերատեսչությունների ներկայացուցիչները (ավելի քան 91%) և ԶԼՄ-ների ներկայացուցիչների 2/3-ը: Փորձագետների ավելի քան 55%-ը անօրինական մուտքի հիմնական պատճառների թվում նշում են՝

- մուտքի երկրների իմիգրացիոն ծառայությունների անմատչելիությունն ու օրինական մուտքի ձևակերպման ընթացակարգերի բյուրոկրատացվածությունը;
- երրորդ տեղում նշվում է օրինական մուտքի համար սահմանված անհրաժեշտ մուծումների մեծ չափերը (մոտ 40 %);
- որպես կարևոր պատճառներ են նշվում նաև մուտքի երկրներում օրինական բնակության իրավունքի ձեռք բերման դժվարությունները (մոտ 30%) և աշխատանքի թույլտվություն ստանալու դժվարությունները (մոտ 20%):

Անօրինական միգրացիայի դեմ պայքարի **քաղաքականության** արդյունավետ իրականացմանը խանգարող հիմնական արգելքների ու խոչընդոտների շարքում ուսումնասիրությունը առանձնացնում է արգելքների ու խոչընդոտների երկու խումբ՝ **օրենսդրական և կառուցվածքա-գործառնության**:

Օրենսդրական բացերի տեսանկյունից` ՀՀ միգրացիոն ոլորտի օրենսդրության վերլուծությունից պարզ է դառնում, որ այն այսօր ունի մի շարք ակնհայտ բացեր, մասնավորապես **առ այսօր ընդունված չեն** «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների Հայաստանի Հանրապետությունից ելքի և Հայաստանի Հանրապետություն մուտքի մասին», «Իմիգրացիայի մասին», «Արտագնա աշխատանքների կազմակերպման մասին» ՀՀ օրենքները: Նշված ակնհայտ բացերից զատ ՀՀ միգրացիոն ոլորտի օրենսդրության բացերի վերաբերյալ փորձագետները նշել են նաև մի շարք այլ բացեր, մասնավորապես՝

1. տուրիստական, աշխատանքի տեղավորման, ծանոթությունների, մոդելների և նման այլ բյուրոների գործունեության արտոնագրման հարցերի չկարգավորվածությունը;
2. ՀՀ Քրեական օրենսգրքում անօրինական միգրացիայի դեմ պայքարի հարցերի չկարգավորվածությունը:

Կառուցվածքա-գործառնային արգելքներն ու խոչընդոտները`

1. Անկանոն միգրացիայի կարգավորման իրավասություն ունեցող մարմինների համագործակցության մեխանիզմների անհատականությունը,
2. միգրացիոն հոսքերի հստակ և տարբերակված հաշվառման մեխանիզմների անկատարությունը,
3. անօրինական միգրացիայի դեմ պայքարի ոլորտում այլ երկրների հետ համագործակցության կատարյալ համակարգի բացակայությունը,
4. քաղաքականության իրականացման գործընթացների արդյունավետ համակարգման մեխանիզմների ու ավանդույթների բացակայությունը և այլն:

Համապատասխան պետական կառավարման ինստիտուտների կողմից անօրինական միգրացիայի դեմ պայքարի ուղղությամբ իրականացող քայլերը շատ վատ են համակարգվում, չկան համաձայնեցված գործողություններ, ինչպես նաև այդ գործողությունների արդյունավետության գնահատման միասնական չափորոշիչներ:

Արտերկրում անկանոն միգրանտի կարգավիճակում հայտնվելու հիմնական պատճառ կարող են դառնալ հետևյալ հանգամանքները.

Մի կողմից՝

- արտասահմանում օրինական աշխատանք գտնելու ընթացակարգերը խիստ բարդ են կամ այդպիսի հնարավորությունները գրեթե բացակայում են
- բավարար տեղեկատվության պակաս կա արտասահմանում օրինական աշխատելու համար անհրաժեշտ պայմանների մասին

Մյուս կողմից՝

- զարգացած երկրների տնտեսությունների առանձին ճյուղերում առկա է օտարերկրյա աշխատուժի նկատմամբ որոշակի պահանջարկ կապված՝
 - ազգաբնակչության ծերացման
 - ծնելիության մակարդակի կտրուկ անկման
 - իրենց քաղաքացիների կողմից ոչ գրավիչ համարվող տարբեր աշխատանքների (հիվանդանոցային քույրեր, տնային սպասուհիներ, գյուղատնտեսության աշխատողներ) առկայության
 - տնտեսության առանձին ճյուղերի առաջանցիկ զարգացման տեմպերի հետևանքով (ինֆորմացիոն տեխնոլոգիաներ և այլն) բարձրակարգ մասնագետների պահանջի առաջացման հետ:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ անկանոն միգրացիայի առաջացման պատճառները միայն ելքի երկրի իրողություններով չեն սահմանափակվում, դրանում մեծ դեր են խաղում նաև ընդունող երկրի ձգող գործոնները՝ մասնավորապես այս կամ այն երկրի գրավչությունը, հնարավորությունը ապաստան հայցելու ճանապարհով օրինական բնակության հիմքեր ձեռքբերելու, ինչպես նաև այդ համակարգի ընձեռած սոցիալական բարիքներից օգտվելու համար: Որպես կանոն, միգրանտները ձգտում են հայտնվել այն երկրում, որն ընդգրկված է մեծածավալ միգրացիոն հոսքեր ընդունող նշանակետ երկրների շարքում, հատկապես արևմտաեվրոպական, որտեղ ապաստանի տրամադրման վերջնական որոշման ընդունման գործընթացը երկար ժամանակ է պահանջում:

Ապաստանի հայցումը միգրանտների համար նաև ապահով քայլ է համարվում, քանի որ պրակտիկորեն ոչ մի հետևանք չունի, չնայած ապաստան ստանալու և այդ ճանապարհով երկրում մնալու համար դիմողի ներկայացրած պատմություններն անհիմն են ճանաչվում: Ավելին, անգամ այդ անձանց հետագայում տվյալ երկիր կրկին այցելելու որևէ սահմանափակում չկա, եթե նրանք ապաստանի հայցի մերժում ստանալուց հետո կամավոր լքում են երկիրը:

Եթե ծագման երկրներում անկանոն միգրանտների տեղափոխումից օգտվում են միջնորդները, ապա նպատակակետ երկրներում՝ ապաստան հայցողների փաստաբանները, ովքեր անհիմն հույսեր են ներշնչում ապաստան հայցողներին, հատկապես ապաստանի հայցի մերժման բողոքարկման դեպքում՝ ներքուստ համոզված լինելով, որ ոչինչ չեն շահելու:

Ինչպես արդեն նշվել է, անկանոն միգրանտների մի սովոր բանակ են կազմում աշխատանքային միգրանտները: Իրականում աշխատանքային միգրանտներից և օտարերկրյա գործատուներից յուրաքանչյուրը

օրինական գործընթացներից խուսափելու իր պատճառն ունի: Սովորաբար միգրանտները խուսափում են միգրացիոն հաշվառման և աշխատանքի թույլտվության՝ այդքան բարդ համակարգից, ինչպես նաև բյուրոկրատական քաշքշուկից: Գործատուները իրենց հերթին շահագրգռված են օտարերկրյա աշխատուժի ոչ ֆորմալ ներգրավմամբ, որպեսզի էժան վարձատրեն աշխատողներին, ինչպես նաև շահագործեն նրանց աշխատանքը և իրենց վրա չվերցնեն իրավական ոչ մի պարտավորություն: Օտարերկրյա աշխատուժի ստվերային ներգրավմամբ գործատուներն ապահովում են իրենց մրցունակությունը՝ մասնավորապես աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների տնտեսման ճանապարհով: Գործատուի համար էժան աշխատուժի օգտագործումը կարող է շահեկան լինել նաև այն առումով, որ ապրանքի ինքնարժեքը կդառնա ավելի էժան: Մյուս կողմից, երկու կողմերն էլ միմյանց կապված չեն, թե գործատուն ցանկացած պահից կարող է ազատվել աշխատողից, թե աշխատողը հեշտությամբ կարող է փոխել գործատուին: Օրենքից դուրս վիճակը երկուստեք «շահեկան» է դառնում:

Անկանոն միգրանտների թվի աճին էապես ազդում է նաև աշխատանքի թույլտվությունների քվոտաների՝ մինչև տարվա վերջ սպառման հանգամանքը: Յուրաքանչյուր երկիր պաշտպանում է իր ներքին աշխատաշուկան՝ երկրում թափուր աշխատատեղ առաջանալու դեպքում այն համալրելու առաջնահերթությունը տալով սեփական քաղաքացիներին, ինչը միջազգայնորեն ընդունելի նորմ է: Միջազգային իրավունքում յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատ ելք կատարել իր երկրից, բայց դա ավտոմատ չի հանգեցնում ցանկացած երկիր մուտքի: Ամեն մի երկիր ինքն է որոշում, թե ում թողնի մուտք գործել իր երկիր, ինչպիսի փաստաթղթերով, ժամկետներով և ինչ պայմաններով, և պետության ինքնիշխանությունը արտահայտվում է նաև այս կերպով:

Մինչ այժմ կատարված հետազոտությունները բավականաչափ պատկերացում են տալիս նաև անկանոն միգրացիայի հետևանքների վերաբերյալ:

Ըստ ԵԱՀԿ պատվերով Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ ՀԿ-ի կողմից 2007թ. իրականացված **«Աշխատանքային միգրացիան Հայաստանից 2005-2007թթ.»** հետազոտության արդյունքների՝ քանի որ աշխատանքային միգրացիայի հիմնական նպատակը Հայաստանում ապրող ընտանիքների համար ապրուստի միջոցների հայթայթումն է, միգրանտների մեծամասնությունը համաձայնում է աշխատելու և ապրելու ծանր պայմաններին և, ընդունող երկրներում ապրելու և աշխատելու օրինական գործընթացներից խուսափելով, վտանգում է իր իրավունքները:

Հետազոտության արդյունքների համաձայն որոշ դեպքերում գրանցվել են շահագործման դեպքեր, որոնք հանգեցրել են հարկադիր աշխատանքի տարբեր դրսևորումների: Այս առումով հետազոտության արդյունքները կարելի է ամփոփել հետևյալ կերպ: Նախ, որոշ բացառություններով, հարկադիր աշխատանքի տարբեր պարունակող իրավիճակները սովորաբար ուղղակի ֆիզիկական բռնության հետևանք չեն: Երկրորդ, միգրանտները հաճախ մուտք են գործել նպատակի երկիր՝ ընկերների, ծանոթների կամ ընտանիքի անդամների աջակցությամբ, որոնք գտնվում են այդ երկրում: Այս պարագայում նրանց աշխատանքային շահագործման խոցելիությունը շատ բարձր է, հատկապես այն ժամանակ, երբ նրանք ունեցել են անօրինական կարգավիճակ և մշտապես գտնվել են հավանական դեպորտացիայի վախի ներքո: Երրորդ, զրհեղը հակված չեն հայտարարելու հարկադիր աշխատանքի փորձի մասին: Նրանք իրավապահ մարմինների հետ համագործակցելու շատ քիչ շարժառիթներ ունեն և շատ քիչ են տեղեկացված իրենց իրավունքների մասին:

Աշխատանքային միգրանտները խաբեությունների և շահագործումների կրկնակի զոհ են դառնում մի կողմից օտարերկրյա գործատուների, մյուս կողմից՝ միջնորդների կողմից: Այդ մասին է վկայում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից 2008թ. անցկացված **«ՀՀ արտաքին և ներքին միգրացիայի ընտանիքային հեղազոտության զեկույցը»**, որն անդրադարձ է կատարել նաև նախքան արտերկիր մեկնելը ձեռքբերված պայմանավորվածությունների կատարմանը: Հետազոտությունը ցույց է տվել, որ հարցվածների 43.6% դեպքում այդ պայմանավորվածությունները չեն իրականացվել միջնորդի և գործատուի թերացումներով պայմանավորված:

Փորձը ցույց է տալիս, որ անկախ նրանից, թե միգրանտները ինչպես են տվյալ երկրում հայտնվում անօրինական միգրանտի կարգավիճակում, այնտեղ մնալու և հաստատվելու նպատակով սկսում են քայլ առ քայլ խախտել մուտքի երկրի օրենսդրությունը՝ սկսած երկրում մնալու ժամկետներից մինչև չթույլատրված,

երբեմն նաև արգելված գործունեությամբ զբաղվելը: Անընդհատ խոյս տալով իրավապահներից՝ նրանք, ի վերջո, կտրվում են հասարակությունից, չեն կարող օգտվել բժշկական ծառայություններից, դիմել իրավապահ մարմիններին, ակնկալել հասարակության, շրջապատի աջակցությունը: Աստիճանաբար անկանոն միգրանտների շփումների շրջապատը սեղմվում է սահմանափակվելով նմանատիպ կարգավիճակում գտնվող կամ տվյալ երկրում անօրինական գործունեությամբ զբաղվող անձանցով: Իրենց կարգավիճակից ելնելով՝ միգրանտները երկար տարիներ չեն մնում են այդ վիճակում և չեն կարողանում վերադառնալ հայրենիք, որովհետև մտավախություն ունեն, որ ընդունող երկիր կրկին մեկնելը լուրջ բարդություններ կարող է առաջացնել:

Անկանոն միգրանտների լրջագույն խնդիրներից մեկը երկրի տարածքում ազատ տեղաշարժի հնարավորության բացակայությունն է: Դա հատուկ է նաև Ռուսաստանի դեպքում, որն ունի իր օբյեկտիվ պատճառները: ՌԴ օրենսդրության համաձայն Ռուսաստանի հետ առանց արտոնագրային ռեժիմի պետության քաղաքացուն ՌԴ մուտք գործելուց հետո ժամանակավոր հաշվառման են կանգնեցնում 3 ամսով, որից հետո նա պետք է ստանա կացության կարգավիճակ կամ լքի երկիրը: Կացության կարգավիճակ ստանալը բավականին բարդ գործընթաց է, որովհետև այն տրվում է ՌԴ կառավարության կողմից հաստատված քվոտայի սահմաններում որոշակի պահանջներից ելնելով: Որպեսզի երկրում շարունակեն օրինական բնակվել, օտարերկրացիները մեկնում են ԱՊՀ մոտ երկրներ, որպես կանոն, Ուկրաինա և Բելառուս, ապա նորից են մուտք գործում Ռուսաստան և ստանում նոր հաշվառվում 3 ամիս ժամկետով: Ոմանք բավարար միջոցներ չունենալով՝ շարունակում են մնալ երկրում առանց թույլտվության և խուսափում են ազատ տեղաշարժից:

Խուսափելով ելքի երկրի ծանր սոցիալ-տնտեսական պայմաններից՝ շատ հաճախ մուտքի երկրներում միգրանտները հայտնվում են գրեթե նույն կամ ավելի վատ պայմաններում: Չնայած եկամտի բացարձակ չափը ավելին է լինում, քան ելքի երկրում, սակայն հիմնական ապրանքատեսակների և ծառայությունների անհամեմատ բարձր գները բերում են նրան, որ այդ մարդիկ մուտքի երկրներում զգում են սոցիալական անողակի ավելի ցածր աստիճանի վրա, քան ելքի երկրում:

Անկանոն միգրացիայից կազմակերպված հանցագործություն ընդամենը մեկ քայլ է: Հասարակությունից մեկուսացված և օտարված անօրինական միգրանտների մի մասի համար հետապնդելի և պատժելի գործունեության տեսակներով (թմրաբիզնես, զենքերի վաճառք, մարմնավաճառություն, գողություններ և այլն) զբաղվելուց բացի, այլևս ոչ մի հնարավորություն չի մնում: Շատ դեպքերում դա վերաբերում է նաև այս կարգի ընտանիքների անչափահաս անդամներին: Նրանցից շատերն, ի վերջո, դառնում են կազմակերպված հանցագործության զոհ: Այն հանգամանքը, որ անօրինական միգրանտների մի զգալի մասը մուտքի երկրներ են տեղափոխվում կեղծ փաստաթղթերով, կամ արդեն տեղում են ձեռք բերում դրանք, նրանց լիովին կախման մեջ է պահում այդ փաստաթղթերով նրանց ապահովող հանցագործ կազմավորումներից:

Շատ դեպքերում կանանց վերահսկելու նպատակով բռնություն են կիրառում, կամ օգտվում դրա սպառնալիքից: Ինքնությունը հաստատող փաստաթղթերի բռնագրավումը սահմանափակում է իշխանություններին դիմելու միգրանտների հնարավորությունը: Անօրինական միգրանտի կարգավիճակ ունեցող շատ երիտասարդ կանայք բողոքել են, որ իրենք վատ վերաբերմունքի, անտանելի «աշխատանքային պայմանների» և «աշխատավայրում» բանտարկված պահվելու հետևանքով ձեռք են բերել հոգեկան խանգարումներ:

Ամուսնական գործակալությունների միջոցով ծանոթություն հաստատելով և համապատասխան հրավերով արտասահման մեկնելով՝ մարդիկ հազվադեպ են կասկածում հրավիրողի իրական զգացմունքների և մտադրությունների վրա: Եթե նրանց առաջարկում են դայակի աշխատանք հարուստ ընտանիքում, նրանք ամենևին չեն պարզում, թե դա ինչ «ընտանիք» է: Խոցելիության, խտրականության, շահագործման, նվաստացման և մարգինալ կարգավիճակի հավանականությունը միգրանտների շարքում հատկապես բարձր է կանանց պարագայում:

Արտագնա անօրինական աշխատանքային գործունեությամբ զբաղվողները հաճախ օգտագործում են պարզ և փորձած «ցածր գների» մեթոդը. հաճախորդը անմիջապես ոչինչ չի վճարում, սակայն «ներքաշելով» խաղի մեջ, նրան ստիպում են վճարել՝ աստիճանաբար բարձրացնելով վճարաչափերը:

Օտարերկրյա գործատուները անկանոն միգրանտներին ավելի ցածր աշխատավարձ են վճարում, քան քաղաքացի աշխատողներին կամ օրինական ճանապարհով այդ աշխատանքն իրականացողներին: Աշխատանքից ազատվելու դեպքում միգրանտները հաճախ չեն կարողանում ստանալ իրենց աշխատավարձը: Ավելին, նրանք չեն կարող պահանջել իրենց նույնիսկ այդ ցածր աշխատավարձը. չէ՞ որ իրենք անօրինական են աշխատում: Բացի գործատուներից, նրանց կարող են շահագործել նաև միգրանտների անօրինական տեղափոխմամբ զբաղվող անձինք:

Անօրինական միգրանտները համապատասխանում են ընդունող երկրի՝ հատկապես տնտեսության ցածր որակավորման հատվածների աշխատանքային պահանջներին: Անօրինական աշխատանքային միգրանտները հազվադեպ են պաշտպանված լինում նաև սոցիալական ապահովագրության դեպքերից, քանի որ հիմնականում երիտասարդ են և առողջապահական ծառայությունների կարիք առանձնապես չեն զգում: Անօրինական աշխատանքային միգրանտները նաև ճկուն աշխատուժ են, որոնց տնտեսական անկման ժամանակ հեշտ է աշխատանքից հեռացնելը:

Այսպիսով՝ անկանոն միգրացիան հանգեցնում է մի շարք **անցանկալի հետևանքների**, ինչպիսիք են՝

Անօրինական միգրանտների տեսանկյունից՝

- իրենց իրավունքների և շահերի ոտնահարումը
- խաբեությունների և շահագործման թիրախ դառնալը
- արտաքսման ենթարկվելը (քանի որ Հայաստանից միգրացիոն հոսքերը գերազանցապես ուղղված են Ռուսաստան, ապա հինգ տարի շարունակ երկիր կրկին մուտք գործելու սահմանափակումը ճակատագրական է լինում բազմաթիվ ընտանիքների համար, որովհետև արտագնա աշխատանքը առանձին ընտանիքների համար զբաղվածության միակ հնարավոր եղանակն է)
- առողջապահական խնդիրները, որովհետև ոմանք ապրում են ներքնահարկերում
- ունեցվածքի կորուստը, որովհետև իրենց միգրացիան կազմակերպելու համար ոմանք վաճառում են իրենց գույքը, տունը,
- երեխաների դեպքում՝ կրթության խաթարվածությունը
- կազմակերպված հանցագործության զոհ դառնալը
- անընդհատ վարչաիրավական հետապնդումները,
- ազատ տեղաշարժի հնարավորությունների բացակայությունը
- խտրականությունը,
- սոցիալ-տնտեսական դժվարությունները:

Ելքի պետությունների տեսանկյունից՝

- արտասահմանում գտնվող իր քաղաքացիների մի ստվար բանակի առաջացումը, որոնց իրավունքները հնարավոր չէ պաշտպանել
- արտաքսված քաղաքացիների հիմնախնդիրները լուծելու անհրաժեշտությունը
- հայերի պարագայում - նշանակետ երկրներում արդեն 5-6 սերունդ բնակվող մեր հայրենակիցների բարի համբավին հասցվող վնասը
- ընտանիքների քայքայումը, որովհետև աշխատանքային միգրանտները երբեմն ստիպված են լինում երկար մնալ իրենց ընտանիքներից հեռու
- տեղաշարժվող բնակչության կողմից ՄԻԱՎ-ի և վարակիչ հիվանդությունների՝ երկիր ներթափանցումը:

Մուտքի պետությունների տեսանկյունից՝

- իրենց օրենսդրության խախտումը
- ապաստան հայցողների թվի աճը և դրանով հանդերձ լրացուցիչ ծանրաբեռնվածությունը իրենց երկրների սոցիալական համակարգերի վրա
- հասարակության մեջ ռասիզմի և քսենոֆոբիայի տրամադրությունների ուժգնացումը
- բացասական անդրադարձը բնակչության զբաղվածության և աշխատավարձի մակարդակի վրա
- պետական բյուջե հարկային մուտքերի ոչ լիարժեք ապահովումը, քանի որ միգրանտների զգալի մասն աշխատում է ստվերում

- բնակարանային օրենսգրքի կանոնների խախտումը՝ մասնավորապես բնակմակերեսի գերբնակեցումը միգրանտների կողմից, որոնք առաջացնում են հարևան տեղաբնակների դժգոհությունը
- քրեաձին միջավայրի ստեղծումը:

Բաժին 3. Առաջարկություններ և միջոցառումների ծրագիր

Այսպիսով հետանկախացման տարիներից սկսած միգրացիայի բնագավառում առաջացած մարտահրավերներից մեկը, որին բախվել է Հայաստանը, անկանոն միգրացիան է: Միգրացիոն հոսքերը համաչափ և վերահսկելի լինելուց դարձան լայնածավալ, քառսային, բազմավեկտորային և բազմակատեգորիալ, ինչը սահմանափակեց պետության հնարավորությունները միգրացիոն գործընթացների արդյունավետ կարգավորման համար: Ուսումնասիրված հետազոտություններում, ինչպես նաև ընդունող երկրների միգրացիոն վիճակագրական աղբյուրներում որևէ հիշատակում, գնահատական չկա օտարերկրյա պետությունների տարածքում անօրինական գտնվող ՀՀ քաղաքացիների թվաքանակի վերաբերյալ:

ՀՀ միգրացիայի պետական կարգավորման հիմնական քաղաքական ուղենիշներն ու թիրախները սահմանվել են ՀՀ կառավարության ծրագրում, որում «արտագաղթի կասեցումն ու ներգաղթի խրախուսումը» ճանաչվել է հիմնական գերակայություններից մեկը (ՀՀ կառավարության ծրագիր. Երևան 2008, էջ 25): Հայաստանից սկիզբ առնող անկանոն միգրացիոն մասնակիորեն կարող է լուծվել ընդհանուր արտագաղթի ծավալների կրճատման համատեքստում: Քանի որ էմիգրացիոն (այդ թվում անկանոն միգրացիայի վերածվող) հոսքերի արմատական պատճառները հիմնականում կապված են ՀՀ քաղաքացիների ոչ պատշաճ զբաղվածության և սոցիալ-տնտեսական վիճակի հետ, ուստի իր կարևորագույն նշանակությունն ունի **սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանն ուղղված բարեփոխումների խորացումը, Հայաստանում գործարարությամբ զբաղվելու պայմանների գրավչության մեծացումը:**

Բացի քաղաքացիների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավումից, անկանոն միգրացիայի հակազդման արդյունավետ համակարգը իրենից ներկայացնում է **կանխարգելիչ իրավական, վարչական և քարոզչական ակտիվ միջոցառումների շարք**, որոնք պետք է իրականացնել խնդրով հետաքրքրված ինչպես առանձին ընդունող երկրների, այնպես էլ միջազգային կազմակերպությունների հետ՝ չսահմանափակելով մարդու ազատ տեղաշարժի իրավունքը:

Ինչպես արդեն նշվել է սույն ուսումնասիրության «Երևույթի դեմ պայքարի մեխանիզմները» բաժնում, անկանոն միգրացիայի դեմ արդյունավետ պայքար ծավալելու համար անհրաժեշտ է կիրառել համապարփակ (կոմպլեքս) մոտեցում, այլ կերպ ասած՝ այս երևույթի առաջացման և զարգացման յուրաքանչյուր փուլում անհրաժեշտ է կիրառել համապատասխան, յուրահատուկ քայլեր հետևյալ փուլերում:

- I փուլ – Անկանոն միգրացիայի սաղմնավորում
- II փուլ – Մուտքի երկրներում հայտնաբերված անօրինական միգրանտներ
- III փուլ – Վերադարձից հետո ընկած ժամանակահատված
- IV փուլ – Աշխատանքային միգրացիա երևույթի կանոնակարգում:

I փուլ. Անկանոն միգրացիայի սաղմնավորում

1. Իրավական, վարչական միջոցառումներ

Անհրաժեշտ քայլերը

- «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետությունից ելքի և Հայաստանի Հանրապետություն մուտքի մասին» ՀՀ օրենքի ընդունում
- Արտագնա աշխատանքների հետ կապված միջնորդական աշխատանքներ իրականացնող մասնավոր կազմակերպությունների գործունեության նկատմամբ մոնիտորինգի համակարգի ստեղծում
- «Անկանոն միգրացիայի կազմակերպում» հասկացության սահմանում ՀՀ քրեական օրենսգրքում և համապատասխան պատժամիջոցների նախատեսում /թրաֆիքինգի եղանակով/

- ՀՀ-ում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի ներդրում
 - ՀՀ սահմանային կառավարման համակարգի կատարելագործում:
2. **Հայաստանի բնակչության շրջանում տեղեկատվության տարածում նշանակեց երկրներ մուտք գործելու, բնակվելու, աշխատանքային գործունեություն ծավալելու կարգի և պայմանների մասին:**

Անհրաժեշտ քայլերը

- Միգրացիոն պետական ծառայությունում, ինչպես նաև «Հբաղվածության պետական ծառայություն» գործակալության մարզային և տարածքային առանձին կենտրոններում պոտենցիալ միգրանտների խորհրդատվության հեռախոսային 8-ժամյա թեժ գծի գործարկում, ընդունելության կազմակերպում
- լրատվամիջոցների, հասարակական կազմակերպությունների, աշխատանքի տեղավորման միջնորդ գործակալությունների ներկայացուցիչների համար սեմինարների, կլոր սեղանների կազմակերպման աշխատանքների շարունակում՝ անկանոն միգրանտների կարգավիճակում հայտնվելու ռիսկերի և վտանգների վերաբերյալ պոտենցիալ անկանոն միգրանտների տեղեկացվածության և իրազեկվածության բարձրացման նպատակով
- անկանոն միգրացիային վերաբերող բրոշյուրների, տեղեկատվական նյութերի, պլակատների մշակման, հրատարակման և բնակչության շրջանում տարածման աշխատանքների շարունակում
- հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով երևույթին նվիրված հաղորդումների եթեր արձակման աշխատանքների շարունակում
- անկանոն միգրացիայի թեմայով մասնագիտացող լրագրողների փորձագիտական աջակցության շարունակում
- միգրացիոն խնդիրները լուսաբանող լրագրողների ամենամյա մրցանակաբաշխության անցկացման աշխատանքների շարունակում
- մասնագիտական օժանդակություն ՀՀ մարզերում տարբեր կազմակերպությունների կողմից բացվող միգրացիոն խորհրդատվական կենտրոններին:

II փուլ – Մուտքի երկրներում հայտնաբերված անօրինական միգրանտներ

Անհրաժեշտ քայլերը

- Կողմերի տարածքներում անկանոն միգրացիայի դեմ պայքարի հարցերով զբաղվող իրավասու մարմինների միջև արդյունավետ համագործակցության հաստատում, օպերատիվ կապի ապահովում,
- ՀՀ քաղաքացիների վերադարձին աջակցող ինտերնետային տեղեկատվական համակարգերի հետագա կատարելագործում, ինչը հնարավորություն կընձեռի այդ անձանց էլեկտրոնային կապի հաղորդուղիներով անմիջականորեն կապվելու Հայաստանի պետական կառավարման համապատասխան մարմինների մասնագետների հետ և իրենց հուզող հարցերի վերաբերյալ ստանալ արագ և հավաստի պատասխաններ, արտերկրում ապրող ՀՀ քաղաքացիների շրջանում համակարգերի մասին տեղեկատվության տարածում
- շահագրգիռ երկրների հետ ռեադմիսիոն համաձայնագրերի կնքման նպատակով բանակցությունների շարունակում
- Եվրամիություն-Հայաստան ռեադմիսիոն համաձայնագիր կնքելու արդեն սկսված գործընթացի ակտիվացում:

III փուլ – Վերադարձից հետո ընկած ժամանակահատված

Անհրաժեշտ քայլերը

- Բանակցությունների շարունակում ընդունող երկրների հետ՝ նրանց օժանդակությամբ վերադարձողներին Հայաստանում վերաինտեգրման աջակցություն ցուցաբերելու հարցերի շուրջ
- աշխատաշուկայում ՀՀ վերադարձող քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված զբաղվածության ծրագրերի շարունակում և նոր ծրագրերի ներդրում
- միգրանտների հետ աշխատող պետական մարմիններում Հայաստանի Հանրապետություն վերադարձողների համար խորհրդատվական բնույթի ծառայությունների տրամադրման աշխատանքների շարունակում, ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների հետ գործընկերային հարաբերությունների ակտիվացում:

IV փուլ – Աշխատանքային միգրացիա երևույթի կանոնակարգում

Անհրաժեշտ քայլերը

- Արտագնա աշխատանքի մեկնող ՀՀ քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանության նպատակով
- ՀՀ օրենսդրության մասնավորապես ԱՄԿ թիվ 143 և 97 կոնվենցիաների պահանջներին ներդաշնակեցման աշխատանքների շարունակում
 - ՀՀ օրենսդրության ներդաշնակեցում մասնավորապես ԵԽ «Եվրոպական վերանայված սոցիալական խարտիայի» հոդված 18-19 հոդվածներին
 - անդամակցություն ՄԱԿ-ի 1990թ. «Բոլոր աշխատող միգրանտների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության մասին» կոնվենցիային
 - անդամակցություն ԵԽ «Աշխատանքային միգրանտների իրավական կարգավիճակի մասին» թիվ 93 (1977թ. նոյեմբերի 24) կոնվենցիային
 - անդամակցություն ԱՄԿ «Աշխատանքի տեղավորման մասնավոր գործակալությունների վերաբերյալ» 1997 թվ-ի թիվ 181 կոնվենցիային
 - աշխատանքային միգրացիայի բնագավառում երկկողմ համաձայնագրերի վերանայում կամ կնքում (փոխադարձության և ոչ փոխադարձության սկզբունքով), մասնավորապես՝
 - ԱՊՀ շրջանակներում կնքված երկկողմ համաձայնագրերի վերանայում (մասնավորապես ՌԴ-ի հետ 1994թ. կնքված համաձայնագրի)
 - աշխատանքային միգրացիայի բնագավառում Քատարի Պետության, ինչպես նաև հետ Ֆրանսիայի և Բուլղարիայի երկկողմ համաձայնագրերի կնքման գործընթացի ակտիվացում
 - հայաստանյան աշխատուժի ներգրավման վերաբերյալ երկկողմ համաձայնագրի կնքման ներկայումս հետաքրքրություն արտահայտած երկրների՝ Արաբական Միացյալ Էմիրությունների և Օմանի հետ համաձայնագրի նախագծի մշակման շուրջ բանակցային գործընթացի ակտիվացում
 - օրինական աշխատանքային միգրացիայի հնարավորությունների ընդլայնում 2011թ. հոկտեմբերի 27-ին Լյուքսեմբուրգում ստորագրված Հայաստան-Եվրոպական Միություն «Շարժունակության շուրջ գործընկերություն» հռչակագրի շրջանակներում, ինչպես նաև Հայաստանի համար արդեն սկսված Visa facilitation և ցիրկուլյար միգրացիա նախաձեռնությունների պայմաններում:

Բացի այդ, անկանոն միգրացիայի ծավալները կարող են նվազել, եթե ընդունող երկրները ևս ձեռնարկեն գործուն քայլեր ապաստանի համակարգի գրավչության նվազեցման ուղղությամբ՝ մասնավորապես արագացնելով ապաստանի հայցերի քննարկման գործընթացը, կրճատելով այդ ընթացքում տրամադրվող նպաստի չափը և սոցիալական այլ երաշխիքներ, ինչպես նաև ապաստան հայցողների ազատ տեղաշարժի իրավունքը, ինչը, սակայն, դուրս է ՀՀ օրենսդրության գործիքակազմից:

Միջոցառումների ժամանակացույց

| h/h | Միջոցառման անվանումը | Տարեթիվը | Պատասխանատու կատարող |
|-----|----------------------|----------|----------------------|
| 1 | 2 | 3 | 4 |
| | | | |

| | | | |
|---|---|--------------|---|
| 1 | «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների Հայաստանի Հանրապետությունից ելքի և Հայաստանի Հանրապետություն մուտքի մասին» ՀՀ օրենքի ընդունում | 2012թ. | ՀՀ Ոստիկանություն ՀՀ ՏԿՆ ՄՊԾ ՀՀ ԱԱԾ |
| 2 | «Անկանոն միգրացիայի կազմակերպում» հասկացության սահմանում ՀՀ քրեական օրենսգրքում և համապատասխան պատժամիջոցների նախատեսում /թրաֆիքինգի եղանակով/ | 2012-2013թթ. | ՀՀ Ոստիկանություն ՀՀ ՏԿՆ ՄՊԾ |
| 3 | Արտագնա աշխատանքների հետ կապված միջնորդական ծառայություններ մատուցող մասնավոր կազմակերպությունների գործունեության նկատմամբ պետական մոնիթորինգի համակարգի ներդրում, նման կազմակերպությունների և պետական մարմինների միջև գործընկերային հարաբերությունների հաստատում | 2012թ. | ՀՀ ԱՍՀՆ ՀՀ ՏԿՆ ՄՊԾ ՀՀ ԱԳՆ |
| 4 | միգրացիոն պետական ծառայությունում, ինչպես նաև <<Զբաղվածության պետական ծառայություն>> գործակալության մարզային կամ տարածքային առանձին կենտրոններում պոտենցիալ միգրանտների խորհրդատվության հեռախոսային 8-ժամյա թեժ գծի գործարկում, ընդունելության կազմակերպում | 2012-2016թթ. | ՀՀ ԱՍՀՆ ՀՀ ՏԿՆ ՄՊԾ ՀՀ ԱԳՆ |
| 5 | Լրատվամիջոցների, հասարակական կազմակերպությունների, աշխատանքի տեղավորման միջնորդ գործակալությունների ներկայացուցիչների համար սեմինարների, կլոր սեղանների կազմակերպման աշխատանքների շարունակում՝ անկանոն միգրանտների կարգավիճակում հայտնվելու ռիսկերի և վտանգների վերաբերյալ պոտենցիալ անկանոն միգրանտների տեղեկացվածության և իրազեկվածության բարձրացման նպատակով | 2012-2016թթ. | ՀՀ ԱՍՀՆ ՀՀ ՏԿՆ ՄՊԾ ՀՀ ԱԳՆ |
| 6 | Անկանոն միգրացիային վերաբերող բրոշյուրների, տեղեկատվական նյութերի, պլակատների մշակման, հրատարակման և բնակչության շրջանում տարածման աշխատանքների շարունակում | 2012-2016թթ. | ՀՀ ԱՍՀՆ ՀՀ ՏԿՆ ՄՊԾ ՀՀ ԱԳՆ |
| 7 | Հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով երևույթին նվիրված | 2012-2016թթ. | ՀՀ ԱՍՀՆ ՀՀ ՏԿՆ ՄՊԾ |

| | | | |
|----|---|--------------|---------------------------------|
| | հաղորդումների եթեր արձակում անկանոն միգրացիայի թեմայով մասնագիտացող լրագրողների փորձագիտական աջակցության շարունակում | | ՀՀ ԱԳՆ |
| 8 | Մասնագիտական օժանդակություն ՀՀ մարզերում տարբեր կազմակերպությունների կողմից բացվող միգրացիոն խորհրդատվական կենտրոններին | 2012-2016թթ. | ՀՀ ԱՍՀՆ ՀՀ ՏԿՆ ՄՊԾ ՀՀ ԱԳՆ |
| 9 | ՀՀ օրենսդրության՝ մասնավորապես ԱՄԿ թիվ 143 և 97 կոնվենցիաների պահանջներին ներդաշնակեցման աշխատանքների շարունակում | 2013թ. | ՀՀ ԱՍՀՆ ՀՀ ՏԿՆ ՄՊԾ |
| 10 | ՀՀ օրենսդրության ներդաշնակեցում մասնավորապես ԵԽ «Եվրոպական վերանայված սոցիալական խարտիայի» հոդված 18-19 հոդվածներին | 2013թ. | ՀՀ ԱՍՀՆ ՀՀ ՏԿՆ ՄՊԾ |
| 11 | անդամակցություն ՄԱԿ-ի 1990թ. «Բոլոր աշխատող միգրանտների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության մասին» կոնվենցիային | 2012-2013թթ. | ՀՀ ԱԳՆ ՀՀ ԱՍՀՆ ՀՀ ՏԿՆ ՄՊԾ |
| 12 | անդամակցություն ԵԽ «Աշխատանքային միգրանտների իրավական կարգավիճակի մասին» թիվ 93 (1977թ. նոյեմբերի 24) կոնվենցիային | 2012-2014թթ. | ՀՀ ԱՍՀՆ ՀՀ ՏԿՆ ՄՊԾ |
| 13 | անդամակցություն ԱՄԿ «Աշխատանքի տեղավորման մասնավոր գործակալությունների վերաբերյալ» 1997 թվ-ի թիվ 181 կոնվենցիային | 2012-2013թթ. | ՀՀ ԱՍՀՆ ՀՀ ՏԿՆ ՄՊԾ |
| 14 | աշխատանքային միգրացիայի բնագավառում երկկողմ համաձայնագրերի վերանայում կամ կնքում (փոխադարձության և ոչ փոխադարձության սկզբունքով), մասնավորապես՝ <ul style="list-style-type: none"> - ԱՊՀ շրջանակներում կնքված երկկողմ համաձայնագրերի վերանայում (մասնավորապես ՌԴ-ի հետ 1994թ. կնքված համաձայնագրի) - աշխատանքային միգրացիայի բնագավառում Քատարի Պետության, ինչպես նաև հետ Ֆրանսիայի և Բուլղարիայի երկկողմ համաձայնագրերի կնքման գործընթացի ակտիվացում | 2012-2014թթ. | ՀՀ ԱԳՆ ՀՀ ԱՍՀՆ |

| | | | |
|----|--|---------------|---------------------------------|
| | - հայաստանյան աշխատուժի ներգրավման վերաբերյալ երկկողմ համաձայնագրի կնքման ներկայումս հետաքրքրություն արտահայտած երկրների՝ Արաբական Միացյալ Էմիրությունների և Օմանի հետ համաձայնագրի նախագծի մշակման շուրջ բանակցային գործընթացի ակտիվացում | | |
| 15 | Օրինական աշխատանքային միգրացիայի հնարավորությունների ընդլայնում ԵՄ-ի կողմից Հայաստանի համար արդեն սկսված Mobility and Partnership, Visa facilitation և ցիրկուլյար միգրացիա նախաձեռնությունների պայմաններում: | 2012-2016թթ. | ՀՀ ԱԳՆ, ՀՀ ՏԿՆ ՄՊԾ |
| 16 | Շահագրգիռ երկրների հետ ռեադմիսիոն համաձայնագրերի կնքման նպատակով բանակցությունների շարունակում | 2012-2016թթ. | ՀՀ ԱԳՆ, ՀՀ ՏԿՆ ՄՊԾ ՀՀ ԱԱԾ |
| 17 | Եվրամիություն-Հայաստան ռեադմիսիոն համաձայնագրի կնքելու արդեն սկսված գործընթացի ակտիվացում | 2012-2016թթ. | ՀՀ ԱԳՆ, ՀՀ ՏԿՆ ՄՊԾ ՀՀ ԱԱԾ |
| 18 | ՀՀ քաղաքացիների վերադարձին աջակցող ինտերնետային տեղեկատվական համակարգերի հետագա կատարելագործում, ինչը հնարավորություն կընձեռնի այդ անձանց էլեկտրոնային կապի հաղորդուղիներով անմիջականորեն կապվելու Հայաստանի պետական կառավարման համապատասխան մարմինների մասնագետների հետ և իրենց հուզող հարցերի վերաբերյալ ստանալ արագ և հավաստի պատասխաններ արտերկրում ապրող ՀՀ քաղաքացիների շրջանում համակարգերի մասին տեղեկատվության տարածում | 2012թ. | ՀՀ ՏԿՆ ՄՊԾ |
| 19 | բանակցությունների շարունակում ընդունող երկրների հետ՝ նրանց օժանդակությամբ վերադարձողներին Հայաստանում վերաինտեգրման աջակցություն ցուցաբերելու հարցերի շուրջ | 2012-2016 թթ. | ՀՀ ԱԳՆ, ՀՀ ՏԿՆ ՄՊԾ |
| 20 | աշխատաշուկայում ՀՀ վերադարձող քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված զբաղվածության ծրագրերի վարում և նոր ծրագրերի ներդրում | 2013-2016 թթ. | ՀՀ ԱԱՀՆ ՀՀ Էկոնոմ. նախ. |
| 21 | միգրանտների հետ աշխատող պե- | 2012թ. | ՀՀ ՏԿՆ ՄՊԾ |

| | | |
|---|--|---|
| <p>տական մարմիններում Հայաստանի - Հանրապետություն վերադարձողների համար խորհրդատվական բնույթի ծառայությունների տրամադրման աշխատանքների շարունակում, ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների հետ գործընկերային հարաբերությունների ակտիվացում</p> | | <p>ՀՀ ԱՍՀՆ ՀՀ առողջապ. նախ. ՀՀ ԿԳՆ ՀՀ ոստիկանություն ՀՀ ԱԳՆ</p> |
|---|--|---|